


№16



ԻՈՒՆ

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ
ԱՏՐԻԱՐՔՈՒԹԵՄՆ
ՀԱՅՈՓ
ՆՐՈՒՍԱՂԷՄԻ

ԾԵ ՏԱՐԻ

Թ-Ժ



1981



ԻՈՐՆ

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ
ՍՏՐԻԱՐԶՈՒԹԵՄՆ
ՀԱՅՈՉ
ՆՐՈՒՍԱԴԱՄԻ

ԾԵՍԵՐԻ

Թ - յ

1981



ՄԻՈՂ

ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԾԵ. ՏԱՐԻ - ՆՈՐ ՇՐՋԱՆ


1981	Սեպտեմբեր - Հոկտեմբեր	Թիւ 9 - 10
1981	September - October	No. 9 - 10

SION


VOL. 55

A MONTHLY OF RELIGION, LITERATURE AND PHILOLOGY
OFFICIAL PUBLICATION OF THE ARMENIAN PATRIARCHATE, JERUSALEM

Proprietor: His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem



St. James Press, Jerusalem



198-98

ԽՄԲԱԳՐԱԿՍՆ

ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒՄՆԵՐ

Ե.

(Երուսաղեմի Համալուսմարը եւ «Հայրենիք» Օրաթերթի խմբագրմանը
այդ առիթով)

Զաքարիա Պատրիարքի ծննդեան երկուհարիւրամեակին առիթով, որ հիմնադիրը եղած է Երուսաղեմի Ժառանգաւորաց Վարժարանին, և Երանաշնորհ Դուրեան Պատրիարքի մահուան յիսնամեակին, որ վերանորոգիչը հանդիսացաւ նոյն Վարժարանին, հրաւիրեցինք ժառ. Վարժարանի և Ընծայարանի երէց և կրտսեր եղբայրները միասին ըլլալու, յիշելու մեր ոսկեշող պատանութիւնը և կրակ երիտասարդութիւնը այս Սուրբ Տանը մէջ:

Ուղեցինք նոյնպէս առիթը օգտագործել, մօտեցնելու մեր սիրտերը իրարու, մտածելու Սփիւռքի մեր ժողովուրդի հոգևոր կեանքի մասին, որուն հովիւներն ու առաջնորդներն էին եկողները:

Այս առիթով, նորին Ս. Օծութիւնը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա. իր պատգամին մէջ, ուղղուած Նիշէ Պատրիարքին՝ այս համագումարի առիթով, կ'ըսէր. «Այսօր մեծ հարցը որ կը ծառանայ մեր բոլորիս խղճին առջև այն է թէ մեր Եկեղեցին ինչպէ՞ս կը շարունակէ իր առաքելութիւնը մեր օրերուն և մենք՝ այսօրուան հոգևորականներս, ի՞նչ ողիւծ և ի՞նչ իրագործութեանքով կը ներկայանանք մեր ժողովուրդին առջև»:

Համագումարի խորհրդակցութեանց իբրև ընդհանուր նիւթ տրուած էր «Հայ Եկեղեցւոյ առաքելութիւնը այսօր», ստորաբաժնուած չորս մասերու. — 1) Կրօնական դաստիարակութիւն, 2) Ծէս և արարողութիւն, 3) Կարգ ու կանոն, 4) Ազգային գործունէութիւն: Համագումարին մասնակցողները վերոյիշեալ նիւթերու յայտարարութենէն յետոյ ունեցան զապաժարի փոխանակութիւն մեր Եկեղեցիի և արտասահմանի այժմու կացութեան վերաբերմամբ: Եղածները արտցաւ արտայայտութիւններ էին միայն, որովհետև համագումարը պաշտօնական հանգամանք մը չունէր և մեր Եկեղեցւոյ գործերը կարգադրելու չէր եկած:

«Հայրենիք» Օրաթերթը հետևաբար զուր նեղութիւն յանձն առեր էր Պոսթոնէն մինչև Երուսաղեմ փոխադրելու իր հրետանին, առանց անդրադառնալու թէ իր ռուբրերը, ամբողջովին խնդանք կամաւոր և ակամայ սխալներու, նման էր թաց վառօդի և մզլոտած ռազմանիւթերէ բաղկացած լիցքի մը, որ սխալ նշանառութեան հետևանքով մը ևս ճակատագրուած էր վրիպելու իր

Թիրախէն, օգին մէջ լսեցնելով միայն ապագայորդ ազգային՝ և իբր թէ եկեղեցական. նախանձախնդրութեան որոտը:

Այս առիթով կը գրէ նոյն օրաթերթը. «Խնդրոյ առարկայ չենք ուզեր դարձնել Հայ եկեղեցւոյ ներքին հարցերուն շուրջ խորհրդակցելու նպատակաւ կայացած ժողովէ մը բացակայութիւնը Մեծի Տանն Կիլիկիոյ Հայրապետութեան, որովհետեւ՝ կ'անդիտանանք պատճառները»: «Հայրենիք» Որաթերթի Խմբագիրը իրապէս անդիտակից է իր ըսածներուն՝ յուանց՝ անդրադառնալով թէ եղածը ազգային և եկեղեցական ժողով մը չէր, այլ նրուսողէմի յատուկ, գոյր յորելու եաններու առիթով եղած հրաւեր մը անոնց միայն՝ որոնք աշակերտներ եղած էին նրուսողէմի ժողովարանին և Ընծայարանին: Մեծի Տանն Կիլիկիոյ Հայրապետութեան Միտարանները յիշեալ վարժարանի աշակերտներ չեն եղած, հետեւաբար ինչ հանգամանքով պիտի հրաւիրուէին: Նոյնպէս սխալ է նոյն օրաթերթին յերկրանքը, թէ «եկեղեցական և աշխարհական ղէմքերու կարեւոր թիւ մը չէ ընդառնած հրաւերին»: Նորէն կրկնենք ի լուսաբանութիւն կամաւոր անդիտակիցներուն և մզմատանէ տառապողներուն թէ հրաւիրուած էին ժողովարանին: Վարժարանի և Ընծայարանի երէց և կրտսեր եկեղեցական եղբայրները միայն: Ոչ մէկ աշխարհական հրաւիրուած էր այդ զուտ միտարանկցական հանդիպումին:

«Հայրենիք»ի առաջին, նոյն Խմբագրականին մէջ, հինգ կէտերով մեղադրանքներ կ'ուղղուին հայ կղերին, որոնք ճիշդ պիտի ըլլային եթէ ճիշդ ըլլային: «Հայրենիք»ի Խմբագիրը կը դատաւարէ Հայ եկեղեցականութիւնը որ պատճառ եղած է մեր ազգային աղէտներուն: Թէ եկեղեցական ասպարէզը բաց պահուած է հոգեկան արժէքներէ զուրկ մարդերու առջև: Թէ չքացած է ներուզմատութեան ոգին՝ վերածուելու համար սքեմի շարաշահութեան: Թէ հայ եկեղեցականութիւնը ծխակատար մնաց, զուրկ դաստիարակչական, մշակութային, բարոյական և հոգեկան դերակատարութենէն, թէ ինքնազուխ և ինքնիշխան գործունէութիւն ունեցաւ կղերապետական յուսկնութիւններով: Թէ հայ եկեղեցականը չէ ունեցած արթնութիւն և հեռատեսութիւն, յարմարի կարեւորութիւնը որ պահանջներուն:

Սակայն պարսաւագիրը շատ լաւ գիտէ թէ հայ եկեղեցականութիւնը այդպէս ներկայացնել ուղիւն իր և ուրիշներու տարիներու idée fixe միայն իրենց կը պատկանի: Հայ եկեղեցականութեան նկատմամբ զգացուած նախանձախնդրութիւնը չէ պատճառը իրենց նման ամբաստանութիւններուն: Անոնք ոչ մէկ ատեն իրենց դերին գիտակցութիւնը ունեցողներուն կ'ընծայեն կարելի համակրանքը: Սովոր են առաւելաբար հիանալու միայն իրենց իբր գործիք ծառայողներուն վրայ, եթէ գտնեն նման վատաբանողներ Տիրոջ այգիէն ներս, և անոնց երբեմն տկար սրունքներէն սրինգ և պարապ գանկերէն թմբուկ շինելու, անոնցմով երգելու համար իբր թէ հայ եկեղեցականութեան փառքը: Ողբա՛մ զքեզ, հայ լրագրութիւն, ինչ տեսակ մրտադներու է մնացեւր ասպարէզը՝ մեր արժէքներն ու բարքերը վերբերելու և սեւեւելու համար:

Անշուշտ հայ եկեղեցականությունը իր թուր դասակարգերուն մէջ ալ կրնայ ունենալ տկար և վատառողջ անդամներ, սակայն ափ մը յարգի ծախով մթազն-սծ տեսնել կապշտը երկնքին, տմբաստանութիւն մըն է որ չի համապատասխաներ իրականութեան:

Կը հարցնեսք բարձրաթիչ «Հայրենիք» Օրաթիթի խմբագրին թէ համաշխարհային երկու պատերազմներէն յետոյ, երբ մեր ժողովուրդն ու Եկեղեցին աշխարհ անդժօրէն անճիտուեցան, մեր ժողովուրդը առաջնորդելու կոչուած ինքնակոչերը ինչ ըրին: Միայն հայ կղերր ապաստեցաւ: Տակաւին ինչ ըրին և կ'ընեն ինքզինքնին մեր ժողովուրդին նախախնամութիւնը նկատող ասպետները: Աւելին չենք ուզեր ըսել, մեր մատը բուն վէրքերուն վրայ դնել չուզեալուն համար:

Մեր պատմութեան վերջին մէկէ աւելի աղէտներէն յետոյ, երբ մեր ժողովուրդը շուարած և յուսահատութեան էր մատնուած, նետուած Սփիւռքի մշտնջերուն՝ նորէն հայ եկեղեցականութիւնն էր որ իբրև սրբազան դայեակ, փորձեց և կը փորձէ մինչև այսօր սատար ըլլալ մեր ժողովուրդին, իր ուժերուն ներած չափով: Միթթարել լքուածները, սկսեալ նորածինները Հայ Եկեղեցւոյ և ազգութեան աւագանին մէջ, զոնոնք իր ժողովուրդի սեփականութիւնը դարձնելու համար, կապել կարմիր նարսաղ մուսնացող զոյգերուն, յաւիտենական կեանքի առհաւաստեան բերել հոգիներուն՝ կնքուող գերեզմաններու շուրթին, ատով յաւերժելու նաև ցեղին անմահութեան խորհուրդը:

Կասկած չունինք «Հայրենիք» խմբագրի ազնիւ մտահոգութիւններուն, որ ամէն հայուն է, տեսնելու հայ եկեղեցականը իր դերին սահմանուած: Յետոյ, քող ներուի մեղի ըսելու թէ բարձրագոյն կրթութիւն ստացած եկեղեցականներէն քանին՞ը օգտակար եղած են իրենց եկեղեցիին, խնդրոյ առարկայ չենք ուզեր ընել: Սակայն մեր ժողովուրդի հոգեկան շէնքը իրենց ուսին առն խոյնքը մեր խոնարհ հոգեորականները եղած են առաւելարար, որոնք իրենց անկատարութեան մէջ գիտցած են խղճահարիլ և վրիպանքներու պարագային արցունք ունենալ իրենց աչքերուն խորը:

Այս սրտառու իրողութիւններէն յետոյ ցեխտեղ փորձել հայ եկեղեցականը ոչ միայն հետեանք է տրաս մտածողութեան՝ այլ մանաւանդ անձնական հոգեվիճակի: Հին տրամաբանութեան մէջ «զինքենէ տրամախոհութիւն» կոչուած ձև մը կար որ կը նշանակէր իր զգացումները, իր համոզումն ու բարոյականը ուրիշներուն վրայ տարածել և ըստ այնմ դատումներ կազմել, որ սփեատութեան ամենէն զուհիկ ձևն է: Հայ եկեղեցականը տարիներէ ի վեր պարսաւելու եղանակը գիտակցօրէն և յաճախ անգիտակցօրէն բոլր կերպն է որ կը մատնանչէ:

Թող թէ կրօնքը ինչպէս անհատին՝ նոյնպէս և ժողովուրդի մը մէջ առաջադէպ և առանձինն ապրող զօրութիւն մը չէ, իր ազդեցութիւնը գերազանցօրէն ի դօրծ շնելու զազաւարներու, բարբերու, օրէնսդրութիւններու վրայ՝ բարսյական և մտաւոր զարգացման սատար մը կանդիտանալու համար, որովհետև

ինքն ալ նոյն չափով կ'ազդուի այն միջավայրէն և հանգամանքներէն, որուն մէջ կը շնչէ ու կը շարժի:

Միւս կողմէն, երկաթագիր իրողութիւն է թէ Սփիւռքի մէջ հայութեան պահպանումը Հայ Եկեղեցիով է միայն պայմանաւոր: Այսպէս խորհեցան ու զործեցին իրենց կարգին երկու ծանօթ ժողովուրդներ, մէկէ աւելի կողմերով նման մեզի, Արիական Փաշսիւն և Սեմական Հրեան: Կ'ապրին այսօր այդ երկու ժողովուրդները իրենց ցեղային ինքնութեան միշտ հոգածու, տէր մասամբ իրենց լեզուին, տոմիկ բարքերուն և աւանդութեանց: Սակայն ինչ որ այդ երկու ժողովուրդները այնքան նման կ'ընէ իրարու, ուժգին այն փարուսն է, որով անոնք անբաժան մնացած են միշտ իրենց ազգային կրօնքէն և անոր դաւանական դրութենէն: Անոնք իրենց հաւատքին շնորհիւ է որ կրցած են մշակել ցեղային յատկութիւնները և պահել իրենց տոհմային ինքնակացութիւնը:

Ի՞նչ Թեւադրական օրհնակ՝ կեանքի ու ճակատագրի շատ մը կողմերով մեզի նման այս ժողովուրդներէն մեզի մատուցուած մեր ազգային զոյւթեան ամենէն ճշնաթափայլին և բախտորոշ այս օրերուն: Դժբախտաբար մեզի՝ երկու պատերազմներու միջև ապրող Սփիւռքի սերունդին կը պակսի կրօնական ուշխարհայեացք: Այդ է պատճառ որ տարաշխարհի հայ ժողովուրդը տակաւ կը կորսնցնէ հայ ոգիի յատկանշիչերը: Տարբեր ազգութիւններու մշակոյթներուն մաշուկին ենթակայ, ան կարծես թէ դադրած է դարաւոր մշակութային կեանքի տէր ժողովուրդի մը համբաւին հաւատարիմ ըլլալէ: Այս հանգամանքին արդիւնքն է զուցէ որ այսօր դէպքերը կը վարեն մեր ճակատագիրը, բայց էր երբեմն երբ մենք մեր կեանքը կը շինէինք դէպքերու ազդեցութենէն վեր իմաստութեամբ և մղումներով:

Այսօր Հայ Եկեղեցին մօտիկն է իր զաւակներէն լքուելու տխուր իրականութեան: Տակաւին շատեր թշուառամօթէն կը խորհին թէ դադրած է ան այլևս իր բարեբար և բախտորոշ դերը կատարելէ: Այժմու իր անբաւարար վիճակը պէտք չէ թոյլ տայ մտածելու իր հարազատ զաւակներուն՝ թէ Հայ Եկեղեցին այլևս չքեզ անցեալ մըն է և չունի բաւարար լոյս արձակելու իրեն յառող հոգիներուն: Իրապէս թշուառ են բոլոր անոնք՝ որոնք չունին սէր և աղմուտութիւն սրբուելու անով, և անոր մեծութեան գտնմբուն մէջ որոնելու իրենց հոգեկան կազդողը: պատրաստ ըլլալով, հակառակ պարտադրին, իրենց լաւագոյնովը վերստին հաղուեցնելու հայութեան հասարակաց այդ Մայրը: որ այսօր եթէ աշխարհիկ դորուժեալմբ գինուած բազուկ մը չէ, ստիպան հոգևոր միթարութեան, հաւատքի և ազգային զոյւթեան անխորտակելի նեցուկ մըն է, Սփիւռքի տրամութիւններուն մէջ նետուած իր զաւակներուն:

Եկեղեցւոյ պաշտօնականները դարերով ժրջան մեղուներու նման կատարեցին մեր մէջ իրենց դառն աշխատութիւնները, փուշ և տատակ բուսցնող երկրի մը սարերէն և ձորերէն հազիւ գտնելով իրենց մեղրին պատրաստութեան ծաղիկը: Պէտք չենք զգար մի առ մի թուելու թէ ինչ տեական արդիւնքներ տուած են և կը շարունակեն տալ մեր ժողովուրդին, անոր ներքին կենսունա-

կուլթեան նուիրում արդ համեստ ուժերը, և թէ քնչ տեսակ անդրաշուկութեամբ մը օժտեցին զմեզ անօտարտաշի ժառանգութեան մը համար: Ո՞ր. Հայր, որ նախանձախնդիր է արտափայտանի մեր ինքնութեան և զայնութեան զործին, պիտի ժպրէր իբրև մակաբոյժ արամարհել հայ եկեղեցականը: Չենք հարցնիր թէ երբէն ի վեր գաղթած են անոնք իրենց հայրերու ազնուականութեան պատիւ բերելէ:

Մեզի համար առաջին ցաւազին անակնկալը չէ որ «Հայրենիք» Օրաթերթը և իր ետև կեցողները այնքան անարգիչ ակնարկութիւններով մօտենան հայ եկեղեցականին: Սակայն ճշմարիտ է, որ պախարակուած այդ խեղճ հայ կղեր, թէ՛ հոգևոր կեանքի և թէ՛ ազգապահպանութեան տեսակէտով, շատ աւելի է քան բոլոր կոկողովից ազգային փրկիչները:

Յետոյ պէտք չէ ժողովրդ թէ ամենախոնարհ հայ եկեղեցականն իսկ պատմական անուրանալի գերով մը կանչուած է լրումն ըլլալու և իր մէջ բովանդակելու բոլոր զխաւար տարրերը կատարելութեան: Ան նկարիչ է, և ո՞վ արդարև իր անձին ու իր շուրջիներուն վրայ աւելի լաւ կրնայ պատկերացնել և երանգաւորել խեղճութիւններն ու մեծութիւնները իր ժողովուրդին, քան եկեղեցականը, որուն վրձինը թոյլ մը ունի իր ժողովուրդի անհատներէն և շրջավայրէն և ցոյց մը անոր երազած երկինքէն: Ան երգիչ ու ճարտասան է, և ո՞վ աւելի թրթռուն և պերճախօս կերպով կրնայ նուագել լարերը ազգային ցաւին քան հայ եկեղեցականը՝ որուն սիրտը խորանն է նուիրական աւանդութիւններուն: Ան բժիշկ է, և ո՞վ աւելի ճարտարօրէն կրնայ մանրախոյզ քննել մեր ժողովուրդի ցաւերն ու ախտերը: Ան անկաշառ՝ փաստաբան է, դժբախտներու դատերը ամենէն աւելի արդարօրէն վճռելու:

Չեմ ուզեր աւելին ըսել, կանգ առնելու բոլոր այս զործնական ու անսական կալուածներուն առջև՝ որոնք անհերքելիօրէն եկեղեցականին են ընկերային այն տեսակ կազմի մը մէջ որ զերազանցօրէն մեզ՝ Հայերուս սեփական է: Ամենէն բարձր և ամենէն խոնարհ մարդերուն մէջ ան իր տեղը ունի: Կը հաւատանք թէ հայ եկեղեցականութիւնը այսօր ալ կոչուած է կատարելու կարևոր գեր մը Սփիւռքի տարածքին սփռուած հայ ժողովուրդի կեանքին մէջ, որ սակայն ի վիճակի չէ իրագործելու զայն հասկնալի պատճառներով:

Միւս կողմէն հայ ժողովուրդը, որուն անցեալը անթերի նուիրում մը եղած է իր եկեղեցիին, բայց որուն ծոցին մէջ այսօր կրօնական հաւատալիքներն ու կարգապահութիւնը վատուած և թուլցած են, որովհետև նախնի հաւատքը յարձակումներու կ'ենթարկուի ամէն օր, մտաւորական, կուսակցական, ինչպէս նաև մութ ուժերու կողմէ: Այս կարգի յարձակումները ապացոյց են թէ մշուշապատ անորոշութիւններ կը լեցնեն միտքերը կրօնական և եկեղեցական հարցերու վերաբերեալ, որոնց պատճառով վարանքի ամպեր կը կապտեն հայուն պայծառատեսութիւնը, չափանելու և չզղալու այն տեսլականը, որ զբաղանակած ու վարած է մեր ժողովուրդը դարերով: «Որ ունիցի ականջս լսելոյ լուիցէ»:

(Շարունակելի՝ Ծ)

Ե.

ԿՐՈՆԱԿԱՆ

ԱՆԿԷՋ ՄՈՐԵՆԻՆ

(Տարեկից Ս. Վարդան Մայր Եկեղեցիի,
Նիւ Եոբ):

«Մարենին վառակ էր հրով եւ ոչ այրեւ
(ԵԼՔ, Գ. 2):

ՏՆՍԱՐԱՆ

Ասէ՛ք շուրջ 3300 տարիներ՝ առաջ,
Իսրայէլացիք գերի էին Եգիպտոսի մէջ:
Մովսէս անկէ փախուստ տալով կ'աւ-
պատանի Մարիանացոց աշխարհը՝ Սինա-
յերան մօտ: Հոն Մովսէս կ'ամուսնանայ
և կ'արածէ աներոջ աշխարհները:

Քորեք լերան այդ մասը ծածկուած
էր ծառերով: Ծիւղերէն ռմանք, պտուղ-
ներով ծանրաբեռն, կը կախուէին վար,
ուրիշներ կը բարձրանային վեր:

Հարուստ ծառերը, առակի Փարիսե-
ցիին պէս ինքնագով, կը սկսին վար
զարնել մօտակայ Թուրքին փական՝ փշե-
նին: Երբ հովը փչէր՝ անոնք կ'ըսէին.

«Այ, դու խեղճուկ մօրենի, ինչո՞ւ
պղպած ես՝ մեզ մօտ: Ինչ է քո օգուտը:
Տերեւ չունիս, Թաշուները բոյն չեն շի-
ներ վրադ: Մաղիկ չունիս, մեղուներ
մեղր չեն շիներ քեզմէ: Սաղարթ չունիս,
կենդանիներ չեն հանգչիր շուքիդ: Դուն
գաճաճ, փայտդ անպէտք՝ մարդիկ տուն
չեն շիներ անովդ:

Մօրենին վիշտէն սրտաբեկ՝ կը տա-
ռապէր սաստիկ:

ՏՆՍԻԼՔ

Իսրայէլացիները զերուքենէ ազա-
տելու համար, Աստուած այցելութեան
կ'իջնէ աշխարհ և կը յայտնուի մօրենիին
մէջ՝ Սինայի վրայ:

Ասկէ՝ մօրենին կրակ կը կտրէ, լոյս
կ'արձակէ:

Մոլորած հովիւ մը կը նշմարէ լոյսը
և կը յառաջանայ գէպի զայն:

Մօրենին կրակով կը վառի, բայց
չ'այրիր, չի սպառիր:

Աստուած անոր մէջէն կ'ըսէ.

«Մովսէս, կեցի՛ր, ա՛լ մի: Ժողովար-
հան՝ կ'օգիկներդ, կեցած ճեղդ արբէր է:

«Մովսէս, ես եմ ՈՐ ԷՆ՝ Աստուած Աբ-
րահամի, Իսահակի եւ Յակոբի:»

Հովիւը անդրեւո՞ւ աշխարհ ու դէմքը
երկու ձեռքերովը ծածկած, դեռին կը
փռուի, ծունկի կու գայ:

Ու մօրենիէն լսուող ձայնը կը շա-
րունակէ.

«Մովսէս, սեսայ իմ ժողովուրդիս կրած
անիրաւութիւններն ու օտարապանք: Դրացի,
այցի ելայ զիրենք փրկելու:

«Մովսէս, վեր կայ, զարձիւր Եգիպտոս:
Մօսէ Գարաւոնին որ արձակի իմ ժողովուրդը
զերուքենէ: Ըսէ Իսրայէլին, մեծերուն եւ
փոքերուն, որ շուտով ձգեն Եգիպտոսը ու
հեռելին եկ՝ դէպի երկիրն Աւեսայ: Մի՛
վախճա՛մ, ես ձեզի հետ կը լինիմ: Մովսէս,
դուն հրաժ Կիսի գործես: Իսրայէլը Կիսի
սեսնէ, հաւատայ եւ հեռելի եկը դէպի եր-
կիրը Կարի եւ մեղրի:» (ԵԼՔ, Գ. 1):

Իսրայէլացիք Մովսէսի առաջնորդ-
ութեամբ համբայ կ'ելլեն Եգիպտոսէն:
Անոնք դաղթի, հալածանքի, սովի ու
պատերազմի նեղութիւններով ծանրա-
բեռն՝ կը կարեն կտրմի Մօսէ ու Սինայի
անապատը, և քառասուն տարիէն կը
հասնին Աւետեաց երկիրը, իրենց բախան
ու հակառակորդ հայրենի հողին վրայ
կերտելու վճառականութեամբ:

Ս. Վարդանի օծման տարեգրածին
կը յիշենք այս գրուագիւ՝ իբր այլարա-
նական պատկերացում Ամբրիկայի Հայոց
անցնալին:

ՆՇՈՒՄՆԵՐ

Գու՛մ ժը Եգիպտոսի տեղ երեակայնե-
ցէք Թուրքիան, իսկ Մարիանացոց աշ-
խարհին տեղ՝ Ամբրիկան, ուր Թրքական
հալածանքներէ և ջարդերէ ճողպարած
հայ բնկորները կ'ապաստանին ազատու-
թեան և ապրուստի սիրոյն. Իսրայէլի
պէս գաղթական, Մովսէսի պէս փախու-
տական:

Սկզբնական շրջանի հայ պանդուխտ-
ները ամենէն առաջ 1891ին Ուսարի և
այսպէս Երևանը Սիթիի մէջ ձեռք կ'անցնեն
մէյմէկ կալուած, զորս կը վերածեն եկե-
ղեցիի:

Աւելի ետքը, Նիւ Եորքի Յրդ Պոզո-
տային մօտ, նախ 27րդ և ապա 30րդ փո-
ղացիներուն վրայ կ'ուսենանք Ս. Լուսա-
ւորիչ տնականը երկու եկեղեցիներ, ա-
ռանց առաջնորդարանի, առանց դպրա-
սանի, առանց ընկերային և մշակութա-
յին յարմարութեան, առաջինը մոտ 1500
մը երկրորդ յարկին վրայ սրահ մը վար-
ձու՝ առժամեայ եկեղեցիի յարմարացում:
Ափ Թուռնի Ս. Խաչը չկար:

Երեսնական, քառասնական Թուա-
կաններուն, Նիւ Եորքի հայոց երեք խնդ-
ճուկ եկեղեցիներն ալ կարծէք կը յիշեց-
նեն Քորբի անշուք ճորտներն:

Ան առեն, Կաթողիկոսներու Ս. Պաա-
րիկը, Եպիսկոպոսականներու Ս. Ժօն
Տիվայնը, Բողոքականներու Ռիվըրսայտ
հայտայան եկեղեցիները և Հրեաներու
Համանուէլ Սինակոգը եթէ Քորբի կաղ-
նինքնուն պէտ խօսքի բռնուէին, եթէ
նշտեմէին և զիջէին խօսիլ Հայոց Եկե-
ղեցիին մօտին, անհաւանական չէ որ
զրկնէին Սինայի ծառերուն արմարակա-
կան խօսքերը ժողովին ուղղուած՝ հայոց
հասցէին ...

ԱՅԼ ՊԵՏԵՐ

Հիմա փոխուած է կառուութիւնը: Բո-
ւրովին այլ է պատկերը:

Այսօր Ամերիկայի հայերը ամէն տեղ,
մասնաւոր Նիւ Եորք քաղաքին մէջ, ի
պատուի են, շնորհիւ Ս. Վարդան Մայր
Եկեղեցիին և յարակից համալիրին:

Հայաստանեայց Եկեղեցին և հայ հա-
մայնքը Նիւ Եորքի, Ուաշինկթընի և այլ
քաղաքներու մէջ, ուր հայկական եկե-
ղեցի և համայնք կայ, յարգալից ճանա-
չումի առարկայ են:

Օտար Եկեղեցիները եկուսեցիկ, ըն-
կերային ու քաղաքային ինչ ինչ հարցե-
րու բարձր լուծումին համար կը փնտռեն
հայոց աջակցութիւնը:

Հայոց առաջնորդն ու ներկայացու-
ցիչները առաջ կը քաշուին պատուոյ
քարտերու վրայ:

ԱՄՆի դաշնակցային, նահանգային և
քաղաքապետական ընտրութիւններու մի-
ջոյն, թեկնածուները ակնկալեն հա-

յոց առաջնորդին կամ ներկայացուցիչ-
ներուն մօտ:

Ամէն տարի, Նիւ Եորքի քաղաքա-
պետը Ս. Վարդանանց տօնը Վ. Վարդանի
Օրը, իսկ Ապրիլ 24ը Հայ Նահատակաց
Օրը կը հռչակէ հրովարտակով:

Ամէն տարուայ Սեպտեմբերին, քա-
ղաքապետութիւնը կը գործակցի Առաջ-
նորդարանի նախաձեռնութեամբ կազմա-
կերպուող եւրոպայ ՎԷԿ Աշխարհ Տօնա-
հանգէտին, որ միջազգային, ընկերային
և մշակութային բնոյթ ունի: Քաղաքա-
պետը ճառով մը կը քանայ հանգէտներուն
շարքը, զովելով հայերու բերած նպաստը
Նիւ Եորքի և ԱՄՆի յոռաշրիմութեան:

Ներկայիս, Ուաշինկթըն, ձերմակ
Տունին մէջ, ԱՄՆի Նախագահը կ'ընդունի
Ամերիկայի Հայոց Առաջնորդը և Հ. Մ.
Ը. Մ. ի պատուաբարութիւնը:

1976ին, ԱՄՆի Անկախութեան Երկ-
հարիւրամեակին, Հայոց Շնորհակալութե-
թիւն քեզ, Ամերիկայ կարգախօսով մաս-
նակցութիւնը ծափերով ողջունեցաւ ա-
մէնքէն:

Նայն առիթով, ԱՄՆի յառաջդիմու-
թեան սատարող հայազգի յայտնի դէմքե-
րուն Ֆիլաւէլֆիոյ համագումարը և հա-
յոց կողմէ Ամերիկայի ընծայուած նուէր-
ները, մասնաւորաբար Առիւծ Մերկի ար-
ձանը, դարձ՝ Խորէն Տէր-Յարութիւնեա-
նի, ջերմ գնահատանքով կ'ընդունուին
կառավարութեան և ժողովուրդին կողմէ:

1978 Ապրիլ 17ին, Նիւ Եորքի Քաղա-
քային Խորհուրդը միաձայնութեամբ կ'ո-
րոշէ Ս. Վարդան Մայր Եկեղեցիի յարա-
կից հանրային պարտեզը կոչել Վ. Վար-
դան Զբօսայգի:

ԱՄՆի ցեղային փոքրամասնութեանց
կարգին, հայերը պատուաւոր տեղ ունին
այսօր:

ՎՍՈՒՄԱՐ Հայերը արդարաւանակա-
ն քակուած ալիւս չի յիշուիր:

Հիմա ոչ ոքի միտքէն կ'անցնի ան-
գիտանալ Հայաստանեայց Եկեղեցին կամ
նոյր նմանցիկ փշաթուփի:

Աստիք բաւարար միթաբարկան երեւոյթ-
ներ են, նոր և զեղեցիկ պատկերներ:

Աստիք ամէնքը և գեռ աւերի՝ չատ
բաներ, զորս չենք կրնար թուել այս-

տեղ, ապուղյներն են ԱՄՆ-ի հայ նստաշահ-
քին փոքր կուրիքները թուաբարակելու գի-
տակցութեան, յարստեւ աշխատանքի և
զանգուածեան, իր սուղագին և կրօնական
արժանապատեւութիւնը պահելու և բար-
ձրացնելու նախանձախնդրութեամբ և առ-
տէրքի:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

Սինաթի վրայ վառող բայց զոյրող
մարենիին հրաշքը կարծէք կը կրկնուի
հայաց համար Նիւ Եորքի մէջ:

Հայոց քաջ հովիւ և Ամերիկահայոց
երրեմիկ Աստղնորդ Գարեգին Արքեպիս-
թովանիտն կը տեսնէ զոյրը և վիճմանայ
ձայնը ար կ'ըսէ-

«Գարեգին, տաք է լիբ, ցօտիք
դնդէ, ձեռք տալ դաւաղանդ և արինդ ք
հոգնասկան, անողովորդիդ տաք սուեախոն
յիմ աջեկութեան»

«Գարեգին, ես եմ ՈՐ ԷՆ՝ Աստուած
Լուսաւորչի, Սահակի և Մեսրոպի, շատ
տաք վայցելեմ քո հօտին: Ինձի Դամար
տառն և տառար շինեցէք»

«Գարեգին, ի թուի՝ ամէն հայտա աշո
կարիքի մասին: Ժողովուրդն, ամբողջ,
Հայի և Ալիա Գովանքեւաններ յեցուկ կը
գնահատին Մայր Եկեղեցիի խառնաշմունքը:

«Եւ Գարեգին Մովսէսի պէս կու տայ
աղբանշանն անգլիական»

Հեղինակն կը գտնուին շինութեան
շանձախառնքերոյ Հայի Գովառքեւանն կը
տառնեն քարքին զոյր հանտար զեկամարտա-
թիւնը՝ հանգստեակութեան, հողի գնասին,
շինութեան, կարտաբաւմին և պարտքի
գիշուցութիւն»

Մայր Եկեղեցիին տեւիքը կ'իբրակա-
նանայ: 1968ին, ընդհանուր խանդավա-
տութեան մէջ կը կատարուի տնօրէն Մ.
Աարքանի՝ ձեռամբ Տ. Տ. Վաղգէն Կա-
թողիկոսի:

Եւ Աւարայրի հերոսը՝ Քաջն վարդան
շարութիւն առած՝ յառնին իր անունը
գրող ԱՄՆ-ի Հայոց Մ. Վարդան Եկեղեցիին՝
կը յայտարար Նիւ Եորքի մէջ հոգեւորն առ-
նալնարդելու համար գէպի Աղբիւրը Լաշ-
տին, գէպի տառնը հայրենի՝ փոթի, մեղ-
քի, հացի և գինիի, Վլասն հաստատոյ
վասն հայրենեացոյ Թառա՛ջն:

Ահաւասիկ այժմ Ս. Վարդանի ոսկե-
զօծ գմբէթը անշէջ մարենիին պէս կը
վառի արեւու ճառագայթներուն և ելեք-
արական լոյսերու հեղեղի մէջ:

Հիմա Ս. Վարդանի առաջ քաշանին և
քեմին վրայ կը յայտնուին մեք Փրկիչը,
Հաւատարմի յ Սահակ, Մեսրոպ, Երեմիա-
ցի, Նարեկայրի, Ենարիւրի, Կոմիտաս
վարդան և Անդրանիկ: Անոնք ժողովորդին
կը խօսին փրարու և հաւաքացեալներու՝
Աստուածաշունչն. երկնքի արքայաթե-
ռնն. հայոց աշխարհն, մեր հին և նոր
սքրութիւններէն, գիւղն և արուեստէն,
նորիայն և պապականէն:

Ներկայիս, ամէն Եկեղեցի և տուն օր,
Ս. Վարդանի սեղանին վրայ, ինչպէս
Զատիկի արշալոյսին՝ Յիսուս Յրդին կ'եր-
թի ծալում կերպարանալու: Ան կը խօսի
և կը քաշալու ի հաւատացեալներուն՝ վեր-
կաթեան և ճառաւել կեանքի հովարը:

Այսպէս, Սինաթի վրայ վառող բայց
չալորող մարենիին հրաշքը կը կրկնուի
մեզի համար, կը շարունակուի անհա-
նաւ, անվերջ:

Մովսէս և Գարեգին կը տեսնեն զոյր
և կ'երթան գէպի լոյսը:

Անոնք ողբանչաքած կը խոսակցին
կամիտասին և մեզի համար և մեզի հետ
կ'երգեն:

— Օրհնեալ և Աստուած:

Քրիստոս պատարագեալ բաւիթի ի միջի մե-
րում. ալիւիթա:
Զևարմին իւր այլ մեզ կերակուր, եւ սուրբ
գարին իւր զօղէ ի սեղ, ալիւիթա:
Մատիք առ Տէր եւ առեմ զլոյս. ալիւիթա:
Հաւակեցի եւ սեպեմ զի հաղթէ Տէր, ա-
լիւիթա:
(ՓԱՄԱԳԻՐԻ)

Պրոֆ. Նիւ Եորք

ԶԳՈՆ ԵՊՍ. ՏԷՐ-ՅԱԿՈԲԵԱՆ



ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Շատ յաճախ, տեղական օրաթերթերը աչքե անցուցած տառն, մահազդնորուշաբեր կը հանդիպինք հետեւեալ բացատրութեան. «... Խոր վիշաով կը ծանուցանեն մահը ... Ինչ որ բաժնուեցաւ այս կեանքէն, լրիւ կատարած կրօնական իր պարտականութիւնները»:

Ու անմիջապէս մեր մօքին կ'այցելէ հետեւեալ հարցումը. — Որո՞նք են մեր կրօնական պարտականութիւնները, ահա-նարկուած վերոյիշեալ բացատրութեամբ: Ու յետոյ, երբ, ինչո՞ւ և ինչպէ՞ս կատարելու ենք զանոնք:

Կրօնական պարտականութիւններ անուան տակ ընդհանրապէս կ'իմացուին եկեղեցի յաճախումը, խառնովանութեան կատարումն ու Ս. Հաղորդութեան խորհուրդին պարբերական մեր մասնակցութիւնը: Տակաւին, Եկեղեցւոյ հաստատած կանոններուն հանդէպ մեր հուսաարժութիւնը, ընկալումը անոր Սրբազան Խորհուրդներուն — Միգրութիւն, Ս. Գոսկ (կեանքի ընկեր հարելու պարագային) և այլն:

Սակայն, հարց պիտի տան ոմանք, արդեօք այսքանը բաւական է: արդեօք անհատ մը կարենայ ճշմարիտ քրիստոնեայ համարուիլ, այսինքն իբրեւ ճշմարիտ կրօնիկ հետեորդ, իրմէ սպասուածը անթերի կատարած նկատուիլ:

Անշուշտ թէ չնապարզամիտ ըլլալու է մարդ՝ դրականօրէն պատասխանելու այս հարցումին: Որքան շատ է թիւը անոնց, որոնք վերոյիշեալ բոլոր պարտականութիւնները բախնաբար էն իսկ կատարած ըլլալով մէկտեղ, չեն ապրիր քրիստոնէական բարոյականի սկզբունքներուն համաձայն: Ուրիշ խօսքով, իրենց առօրեայ կենցաղին, իրենց շրջապատին հետ իրենց անմիջական յարաբերութիւններուն մէջ չեն ցուցաբերիր իսկական քրիստոնեայէ մը ակնկալուած վարժունքն ու վերաբերմունքը:

Այս բոլորը անոր համար որ կրօնական պարտականութիւններն ալ, միւս

բոլոր տեսակի պարտականութիւններուն նման, իրենց յաճախակի կրկնութիւններուն իբր հետեւած, շատ անգամ կը դառնան պարտադրանք, զգուանքով ու դժգոհութեամբ միայն կատարուած, կամ շատ շատ մեր ամէնօրեայ կեանքին մաս կազմող մեքենականօրէն կատարուած արարքներ, որոնց արտաքին ձեւն է որ կը դրուէ մեր ուշադրութիւնը քան միջուկը, էութիւնը, ի մի խօսք՝ ոգին:

Ի՞նչ հարկ, պիտի հարցնեն ուրիշներ, կրօնական պարտականութիւններ ալ բարդելու արդէն իսկ ճոխ ու խեղ մեր առօրեայ ժամանակացոյցին վրայ, մեր ամէնօրեայ հաղորդումէ կատարականութեանց, զրադուձներու շարքին: Զի՞նք աստիճանական, ընկերային, ազգային և նման պարտականութիւններ: Ուրկէ՞ ճարիչ ժամանակ ու արժանազտութիւն: Մասնագետներու համար մեր հոգեւոր կարիքներով, որոնց գոյութիւնը կ'անդիտանան յաճախ:

Քրիստոնէական մեր պարտականութիւնը լրիւ հասուցած կրնանք նկատուիլ այն տառն միայն, երբ զանոնք կատարած ըլլանք կամովին ու համոյթով, և ոչ թէ չկամութեամբ ու դժգոհելով: Երբ Կրօնական իւրաքանչիւր անարար կ'զգանք խոր գոհունակութիւնը, զոր կ'ունենայ մարդ երբ կատարած է բարի ու աստուածափառանոյ արարք մը ու այդու քակ'հալ տէ իր ներքին եսին, իր խղճին հետ: Անսպասու անարարութիւնը մեծ հոգիներու:

Կրօնական մեր պարտականութիւններ բարդ են ու բազմաթիւ: Սխալ պիտի ըլլար զուգահեռական մը քաշել անոնց և վերոյիշեալ, այլ մարդբոլմէ մեր ուսերուն: Կրօնական պարտականութիւններուն միջև, Արդարեւ խորքին մէջ կրօնական է ամէն արարք՝ որ կը ստատրէ մարդկային կեանքի բարելաւման, Մարդերու բարորութեան, Այսպէս, Ս. Հաղորդութեան ընկալումին չափ ընդունելի ու հանելի է Տիրոջ մեղմէ նուազ բախտաւորներու հասցէին մեղմէ հասած նիւթական ու բարոյական ամէն աջակցութիւն: Կրօնական պարտականութիւն մը կատարած կ'ըլլանք ամէն անգամ որ մեր հոգիի ու մօքի լոյսէն շոգեղ, կը արար

մադրենք այլոց հոգեկան ու մտաւար խաւարի ցրումին, երբ մեր նիւթական չոր նստէրին կը միացնենք միտթորակա՛ն խօսքերու քաղցր սպեղանին՝ չքաւորութեան մէջ տուայտող մեր եղբայրներուն, երբ նիւթականին հետ մեր ժամանակէն ալ կը դոհենք այցելելու համար հիւանդանոցի մը կամ անկույտնոցի մը անհիւար ընկալ պատերու ետին մանուկն հետ պայքարող կամ իրենց կեանքի վերջին ամպամած օրերը քաշքշող հիւանդներուն ու ծերերուն, երբ մեր վարկն ու ապահովութիւնը վտանգելու գիշորէն իսկ կը բերենք բարերար ու արդար մեր միջամտութիւնը, բանտարգելութեան կամ դատաւարութեան հոգեմաշ վիճակներէն դուրս բերելու համար անբաւական կամ իրաւարդական անհատ մը, երբ տնտեսութենէն անձնատպանութեան մօտնոց ըստապագանքի մեր ծանօթին կը մատուցուինք յայտն ու խրախուսելու պայման աշխարհի նոյնիւ կեանքին ու արամարհոտ ակնարկով՝ անոր տաղտուկներուն ու ճշգրտութիւններուն, երբ չենք զլանար մեր մասնակցութիւնը բերելու ճշունձի տակ հիւծող դանգաւածներու քաղաքական քարտուրթեան, մարդկային տարրական իրաւունքներու տիրացման համար մղուած ազնիւ պայքարին, երբ կը փորձենք հաշտութեան ու խաղաղութեան ծիրաւիովը իրարու կամրջել ճշնոտած սրտերը մարդերու, երբ մանաւանդ Աստուծոյ խօսքին կազդոյրն ու սիրտինքն կը բերենք աշխարհիկ աժան հաճոյքներու ետեւէն իրենց խելայեղ վաղճէն խոնջ ու պարտաւան հոգիներուն, եւ մեր ցանած բարի սերմերուն անուձին ու աստք պղծաբերութիւն ի տես կ'անհնանք աշխուսագործը հաճոյքներուն, ու վերջապէս երբ ուրիշները միտթորակու եւ երջանկացնելու մէջ կը փնտռենք մեր ալ միտթորութիւնն ու երջանկութիւնը:

Իցի՛ւ թէ, մահադոյներու մէջ արուած յայտարարութեանց համաձայն, ստուար ըլլար թիւը շիրենց կրօնական պարտականութիւնը կատարածն եւ այդ երանագին վիճակին մէջ տալ աշխարհէն մեկնածներուն: Գէթ ճշգրիտ ըլլար այդ քրիստոնեաներու պարագային, որոնց մահուան

առիթով է որ կը դործածուի վերոյիշեալ բացատրութիւնը: Ոչ միայն որովհետեւ Աստուծոյ գործին էրմանը կրօնքին հետեւորդները իրենց գերազանց թիւէն բացի իրենց մէջ կը հաշուեն համագոյքի ամենէն պայծառամիտ ու յառաջողէ՛մ ժողովուրդները, այլ նաեւ անոր համար, որ անոնք է որ կոչուած են ըլլալու ճաղը երկրի: Միշնչեալ տխուր իրականութիւն է որ քրիստոնեայ պետութիւնները չընթացեցնեն երկու համաշխարհային եւ կործանարար պատերազմները մեր դարուն:

Իրենց պարտականութիւններուն գիտակից անհատներէն կազմուած խմբուորումներն են միայն որոնք երբ ու կենսունակ ու օրնաօրինակ, սէր ու բարիք տարածելով իրենց շուրջ: Ու կրօնական պարտականութեանց տեղը առաջին գծի վրայ է միշտ: Վասնզի իր կրօնական պարտականութեանց անթերի կատարումին հետամուտ անհատը չի կրնար թերանալ ընտանեկան, ընկերային, քաղաքացիական պիտակի տակ առնուած իր պարտականութիւններուն մէջ, քաջ գիտնալով թէ այս վերջիններէն մէկուն մէջ իր թերացումը շատ, բան պիտի զեղչէր կրօնական պարտականութեանց կատարումէն, դարձնելով իր քայլերը անհաւասարակիւն ու իր կեանքը անհերքաշանկ:

Որքա՛ն ցանկալի է որ բոլոր ալ մեր կրօնական պարտականութիւններուն մէջ ըլլայինք խղճամիտ ու բռնադիր, որպէսզի անոնք չըլլային ձեւականութեան համար միայն կատարուած իմաստազուրկ արարներ: Վասնզի այդպէսով է միայն որ պիտի արժանի ըլլալու ընդունելու աստուածային շնորհաց հեղուքը մեր սրտերուն մէջ, անոնցմով դոտեպինդ՝ անվեհեր ճակատելու համար աշխարհի չարքներուն ու մութերուն գէժ, ու խաղաղ սրտով գիտագրուելու մեր համբու ծայրին մեզ դարանակալ սպասող դժնեհեանի մանր:

ԳԵՈՐԳ Ս. ՃԻՆԻՎԻԶԻՄՆԵ

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ

ՏԵՍԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ

261. ՆԲԱՆՈՒԹԵԱՆ ՔԱՅԱՏՐՈՒԹԻՒՆԸ.

Այս բոլորը կը քաղուի առաքելին խօսքերէն, որ կ'ըսէ. «Այժմ տեսանեմք ընդ հայելի օրինակաւ, այլ յայնժամ դէմ յանդիման, այժմ խելամուտ եմ փոքր ի շատէ, այլ յայնժամ գիտացից որպէս եւ նոյն ծանեաւ գիտա (Ա. Կորնթ. ԺԳ. 12), ուր վերջին խօսքերը չափազանցօրէն կը ցուցնեն առաւելութիւնը, որովհետեւ ան. կարելի է որ սահմանաւոր արարածը անսահման Արարիչին հաւատարի: Ասոր է որ կը վերաբերի նաեւ Յովնանու խօսքը՝ «Դիտեմք զի յորժամ նա յայտնեցի, նման նմա լինելոց եմք, զի տեսանելոց եմք զնա որպէս եւ էն» (Ա. Յովն. Գ. 2), եւ հոս դարձեալ հարկ է տեսնելը որոշել իմանալիէն, որովհետեւ անսովորութիւնը որչափ ալ կատարեալ ըլլայ իմացութենէն, իսկ վարձուց անհաւատարութեան՝ հ'ակնարկէ Բրիտանոսի սա խօսքը թէ «Դիտան հօր իմոյ օթեանք բազումք» (Յովն. ԺԳ. 2), ուր յայտնապէս կը վկայէ Պողոս ըսելով. «Այլ փառք եւս որեքական եւ այլ փառք լուսնի, իսկ փառք աստեղոց, եւ աստղ քան զաստղ առաւել է փառօք» (Ա. Կորնթ. ԺԶ. 41): Նոյնը հնար է՝ քաղել նաեւ սա խօսքէն. «Այսուհետեւ կայ եւ մնայ ինձ արդարութեան պատիւն, զոր հատուցէ ինձ յաւերժ յայնժիկ արդարեւ Դատմոր» (Բ. Տիմ. Գ. 8): Վասնզի արդարութեան պատիւը պէտք է համեմատուի իւրաքանչիւրին արդիւնքներուն:

262. ՅԱՐՈՒՑԵԱԼՆԵՐՈՒՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ.

Գալով այն խնդրոյն թէ արքարները ինչպիսի մարմին պիտի ունենան իրենց արքայութեան մէջ, սովոր ենք ըսել թէ անոնք պիտի ունենան փառքի ձիրքեր կամ փառաւորեալ մարմիններ, նման Բրիտանոսի՝ եւ աստեղիւն վերջ ունեցած փառաւորեալ մարմինին: Դպրոցականները այս ձիրքերը սովոր են չորսի

բաժնելու՝ անցաւարութիւն, քառանկյութիւն, երազութիւն եւ պայծառութիւն, զորս Տաթևացիի հօթի կ'անցնէ եւ կը թուէ՝ փեղեկութիւն, արագութիւն, ուժգնութիւն, ազատութիւն, կամաւորութիւն, առողջութիւն, անմահութիւն: Իսկ առաքելը այլուր յառաջ բերած խօսքերուն մէջ կը թուէ անապականութիւն, փառաւորութիւն, զօրութիւն, հոգեւորութիւն (Ա. Կորնթ. ԺԵ. 42, 43), որոնց մասին պէտք է իմանալ երկարաբանելու, միայն թէ ըստ պատշաճ իրենց նման գրութեան՝ այլեւ պիտի չլուծուին աւանդի եւ պիտի չունենան այն պէտքերն ու կարիքները զորս կ'ունենային այս կեանքին մէջ:

Իսկ մարմնական զայլութիւններն առաջադի պիտի չկորսնցնեն, որպէսզի մարմինն չուրիշալ ալ չկորսուի, բայց անոնց առարկաները եւ հանգամանքները պիտի արբերին այժմեան կացութենէն, եւ որք, ըստ Պողոսի խօսքին, Արքաւորութիւն, երկնաւորութիւն ու մարմնաւոր պիտի ընկզմին քմանալին եւ հոգեւորին մէջ, բայց զգալի վայելչութեան գծով պարզ առաջադի է արդարեւ իսկ խօսքերը երոնց մէջ զգալի զայնքներու յիշատակութիւն կ'ըլլայ, պէտք է մեկնուին այսպիսիպէս իմաստով, ձկնով ըստանուածին համար անշուշտ խօսքէն՝ «Արքիզ զգալի ընդ ձեզ մարմնայնութեան հօր իմոյ» (Մատթ. ԻԶ. 28):

263. ԷՌԻԹԻՒՆ ՏԱՆՔԱՆԵՐԸ. Իսկ գտնուող արքայութեան հիմունքները՝ ընդհանուր սկզբունքով բացատրած կ'ըլլանք գաղտնի ըմբռնելով իբրեւ հովաքութիւնը երոնքութեան ըմբռնուածոյն տեսութիւնը՝ լրտես է երկնաւորութեան, անշուշտ այն տեսութեան զրկումն եւ պիտի ըլլայ լրտես գաղտնի պարտութեան: Ստեփան Ս. Գրոց այս խօսքերը որոնք կը յիշեն զգաղտնի յոռի տեսանելուն (Մատթ. ԻԵ. 46), եւ խօսքով գեներալի մասին կ'ըսեն, «Եւ որ ողորմեալ ոչ մեռանի եւ հուրն ոչ չիլունի» (Մկկ. Գ. 43), մեզի կը հասկցնեն թէ քացի զըրկեմին գաղտնաբանութենէն, զգալի

մէջ զգացական առանջանքներ, ալ կ'ան, ու
բանցմով կը տառապին դատապարտեալներ
բռնաժամակնորդ, Արդարեւ քերթերու
նախնական մասին է խօսքը, անհնար է
ըսել թէ արեւէ զգալի համարը Գրեյսը բան
մը տակցին Ապարիտը հագնական վաշխած
ներսէն վրայ, քայքայ նայել կրնար
խորիւր ցոսեկտան եւ քննարկներուն վրայ
որովհետեւ Գրեյսը բացառական բան մը
ըլլալով անոր Գրեյսը արդարեւ մը ցուելու
տաղանթներու հաւելցողին, միշտ անդ կը
մնայ զգալի առանջանքներու բնաւ ազ
նմեմ տեսողի չէ ընդունիլ իրականութեւ
թիւնը զգալի առանջանքներուն, արեւը
հաւաքի եւ որդով կը պատկերացունի Որ
զով սովորական է խոյն խայթը իմանալ
իսկ հաւրը կը ներկայացնէ լրտմն աւսմ
փոփոխը բոլոր զգալի առանջանքներուն

264. ԶԳԱԼԻ ՖԱԼԱՆԻՎ. Դժոխքի
զգալի հաւրը տուի՞ր կ'ըլլայ ինչ ինչ դժու
աւարութեանց, որոնց մէջ առաջինը այն
կը համարուի թէ ինչպէս անհիւսկան
հոգիները կրնան առանջադի նիւթական
հաւրէն: Բայց այդ դժուարութիւնը, որ
յաճախ կը յաժի բերաններու մէջ, աւելի
չտուգեալներու դժուարութեան դէմ կրնայ
աղղալի, վառնգի անանք նիւթական հաւր
փնթիկութեան դժուարութեան մէջ եւ յարութեւ
նէն այդ արտաքինը կրնային կը տանին հա
ղիները, մինչ միւր հնարանը քաղութեան
մէջ դժուարութեան չկայ այդ մասին
քանի որ անոր մէջ փնթիկութիւնը դատար
արանի համար յարութիւն առած մեղաւար
ները կը տանջուին գեհնանին հաւրովը:
Բայց այն առան եւ կը Գրեյսը թէ ինչ
կրնայ է այդ ար անպարտելի կը վառի եւ
որովհետեւ Գրեյսը, ինչով կ'արժանանի, ին
չով կը անանի: Թէպէտ ոչ մէկ պէտք
կայ բաղդատելու յետ յարութեան կոցու
թիւնը ներկայի պահանջներուն հետ, սա
կայն եւ պայտէս պէտք է տակցնել թէ
զժոխքի համար յիշատակուած բոլոր մաս
րամասնութիւնները և կիզիչ հար, կըր
ճըտում աստմանց, չօղտիւնի խաւար,
անհաճեմապ ժողահարութիւն, անպարտելի
տեսիլներ, կապանք, կատանք — ամէնքն
որ աշխարհական բացատրութիւններն են
իմանալի պատիւներուն:

265. ՓԱՍՑ ՅԱԼԻՍԵՆԱԿԼՆՈՒԹԻԱՆ,
Թէ՛ պատիւներուն եւ թէ՛ հրանալներուն
բայց մասնաւոր, պատիւներուն յաւաքե
նախնականութեան համար ուրիշ բան չենք
կրնաք ըսել մենք եթէ ոչ քաղցը ճշմար
տութեան յարանալի թիւնը այն վարկեան
ներէն զորաւ քանիցս յաւալը թերինք
Ա՛մենէն պահի՛ նայր չէ հակառակը հաս
պատեց նիւթին հակառակներէն գտեալ
քով, եւ ըսեալով որ քերթիւն թէ փիզը
աւելցած բանը վախճան ալ պէտք է գե
նենայ: Ոչ մէկ քննարկներուն ճշմարտեւ
թիւն չի պարտել որ աշխարհի հետեւ
թիւն մը, աւս մէկ կերպով է՝ ապացու
աւիթ թէ անընդունալի է նիւթը անընդ
հատ աւականալութեան, որ սովորական
չկարող յաւաքեալականութիւն կը կոչուի
կամ աւելի ստորագրութիւն մասնական
բոլորութիւն: Այդ հասկանալի անպարտ
այն յաւարտին կը վերադառնի անպէտ
ները՝ հաստատելով թէ աշխարհի աշխարհ
այլ միայն կը բաղդատուի, կը աղղալ
զսպարուի եւ կը վերադառնալով շարուն
ակապէտս նաեւ աշխարհի կատարած ըս
ով պիտի հասկանանք անոր աշխարհ
այլ արժեանքի գործիւնին խորագրութիւն
ուրիշ, նոր եւ արտաքինը գործիւնին մի
փոխանցումը կ'ալ թէ ինչ է լուծուիլ
գիւրաւ կը հարկուի, հասկանալիներու
տեսակականութեան է ներքին կապակցու
թեանց զգալութեան, պայտէս ար հարկ չի
փնթիկութեան արտաքին եւ աշխարհի ուրիշ
ներս, որոնցմէ յաւալը գոյ ճիւթին ին
արտաքինը լուծուիլը

Բայց թէ որքան արեւելք հնարանոր՝
հար չէ բնաւ ցուցնել ներկայէն, իսկ
ինչ որ աստուին է՝ հաստատուած է
յայտնաբերան հաստատութիւն Գրեյսը
առաքելաց կանխորդկոյց վարդապետ
թիւններով եւ ալ թէ բնական կամ նիւ
թական ցուցմաններով:

266. ԱՌԵՏԱՐԱՆԻ ՆԿԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ
Գրեյսը քանի որ աստատուած է կատար
թիւն մէջ պարզապէս յաւաքեալական կը
կոչէ դատաւարանները, քանի որ անոր
զգալէս յաւաքեալական կ'ընէ զժոխքին
համար: Բայց կան մասնորներ, որոնք
հիմնուելով աստուածային արդարութեան

վրիժուց լրժան և աստուածային ոգոր-
մութեան յողթանակին, ինչպէս մարգ-
կային գործոց չափաւորութեան փաստե-
րուն վրայ, կը յօտարին ըսել թէ սւր
սւրհմն պիտի անցնի գծախճը, և բոլոր
հոգիները պիտի հասնին երկնային երա-
նութեան: Սակայն այս կարծիքը կը հիմ-
նուի չափաւոր մեղաց անչափ պատիժնե-
րու հետ անհամեմատութեան վրայ, և
չառ հիմնաւոր չէ, որովհետեւ անչափ Աս-
տուծոյ դէմ գործուած չարիքը, ըստ
սուրբ Բանին, անչափ է: Իսկ եթէ կը
հիմնուի աստուածային գթութեան վրայ,
տակւորդ է այդ բարեպաշտական զգոցումն
ալ, զոր կարելի չէ ընդդէմ հանել Քրիս-
տոսի խօսքին որ յաւիտենական որակեց
տանջանքը: Ուստի ընդունելի չէ այդ
կարծիքը, թէ և հիներէն իսկ սմանք ան-
հնար չեն համարած զայն:

267. ՄԻՈՅՆ ԵՐԿՈՒ ՕՐԵՒԱՆՆԵՐ. Մի-
ենոյն նկարագրութեան մէջ երկու են
հոգիներու վերջնական օթեանները, այ-
սինքն ճիշտնք յաւիտենականք և ճառն-
ջանք յաւիտենականք: Ու յաւիտենական
տանջանքները պահուած են անոնց հա-
մար, որոնք ներգործական յանցանքնե-
րով մեղանշած են, որովհետեւ, կ'ըսէ
Պատուարը, ճիւղցեայ և ոչ ետուք ինձ
սուտիւ (Մատթ. ԻԵ. 42): Միւս կողմէ,
Ինք՝ Քրիստոս-բռաւ. ճեթէ ոք ոչ ծնցի
ի ջրոյ և ի հողոյ, ոչ կարէ մտանել
յարգայութիւն Աստուծոյ (Յովհ. Գ. 8):
Արդ, անկունք մանուկները և անոնց
նմանները, անկունք մնացած ապուշները
և խելայեղները, մէկ խօսքով՝ ներգոր-

ծական յանցանքի պատասխանատուութե-
ան զերծ մնացած ամէն անձ, որ չունի
ոչ մկրտութիւն՝ որ քառութեան արժա-
նանայ, և ոչ ներգործական մեղք՝ որ
գծախճի մասնուի, ինչ պիտի ըլլան
Հոռովմեղանները այդպիսիներուն համար
կ'ենթադրեն յատուկ տեղ մը, արգայու-
թեան և գծախճի միջեւ, սւր չեն գտնուի
ոչ մէկին երանութիւնները և ոչ միւսին
տանջանքները, և այդպիսի զրկման Բա-
ցոտական վիճակի մէջ հաստատեցին ան-
կունք մանկանց գթութիւնը, և տեղին
անունը կոչեցին Լիւպոս, լատիներէն
բառէն՝ որ կը նշանակէ Սքր, թերեւ ըսել
ուզելով իբր գաւթի՝ գծախճին եղբայր
Բայց այդ երբորդական տեղը արտաքոյ
կը մնայ այն տեղերէն՝ զորս Քրիստոս
իբրեւ վճռական ցոյց քուտաւ, և ի գէպ
չէ բնաւ յայտնուլ վարդապետութենէն
գուրս նոր Բան մը կողմէ: Կ'իսկ ան-
կունք մանկանց համար, որոնք չունին
ներգործական ոչինչ, կան որ զանոնք
բացարձակապէս կ'ենթադրեն պատասխա-
րութեան, սւրինք գծախճի մէջ անոնց
լոկ զրկումի գիրք մը կուտան, և սւ-
րինք կը փափաքին ենթադրել թէ ա-
նոնց համար արտառովոր շնորհք մը պիտի
ըլլայ երկինքը մուտ ունենալ... Բայց
մենք կը բաւականանաք ըսելով թէ
քրիստոնէական վարդապետութիւնը ա-
նոնց համար յայտնուլ ոչինչ ունի, և
անհնար է անյայտ բաներուն համար նոր
յայտնութիւններ տեսնել:

ՄԱՂԱՔԻԱ ԱՐԳԵՅՍ. ՕՐՄԱՆԵԱՆ
(Շարունակելի՝ 26)

Ն Ո Ր Ք Ա Ռ Ե Ա Կ Ն Ե Ր

Հայաստան, գուցէ այսպէս փոքրացար,
Որ տեղաւորուես մեք արեւի մէջ.
Այրուած մատեանի պասառիկ դարձար,
Որ վրադ դողանք ծով թղթերի մէջ.

Որ պսղունց հողը թալիսմանի պէս
Մեք կրծքի վրայ կրենք երկիւղած,
Անուկոյ տալով մաքրուեմք դարձալ
Աւխարհասարած այս ստերի մէջ:

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ

Ք Ա Ռ Ե Ա Կ Ն Ե Ր

Դիպցիր ք'ամէն բան անհամ կասակ է,
Թէ պարապութիւնն այս անյասակ է,
Թէ չըկան վեր, վար եւ բարձր ու ցած,
Պարապին մէջ է ամէն ինչ կախուած:

Այս ծովն ու դաշտերն, լեռներն ու անտառ,
Աստղազարդ երկինքն այս հրաշափառ,
Անիմաս՝ ուրեմն ... անհամ կասա՞կ է
Տիեզերքը այս — *Անսահման Տաճար*:

Ներժնչած ամէն մէկ հիւլէին մէջ,
Ու մասնիկներուն մէջ մեր սրնունդին,
Կը զգամ ես հիգը, խինդը, ցաւն անեղ
Եւ սրտփխը մարդկային սրտին:

Երազը երբ մեկներ է ընդմիջ՝
Դեռ ինչո՞ւ, ուրեմն, ըսպասել,
Օրէ - օր մեծցընել ցաւ ու վիշտ,
Ու կեանքը հին ձորձի մ'պէս մաշել:

Վեր կենամ նորէն, բռնեմ այս ճամբան,
Անձկութիւնս յանձնեմ սա մեղրմ հովին,
Ծառին ու բուփին սիրոյ ողջոյն ճամ,
Արեւուն բանամ սիրքս լիովին:

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Ա Շ Ն Ա Ն Ա Մ ՈՒ Տ

Աւանամուտի խաղա՜յ երեկոյ,
Երկինքը ճակաւ կը հագնի ոսկի.
Ինձ կը թրւի թէ վիւսօս է անգոյ.
Երկինքը վաղուան յայտը կը բռնկի:

Ինչքա՛ն կ'ուզէի ձեռք մը մոզակամ
Կասեցնէր ընթացքը ժամանակին,
Ու ես հեփաթի մահուկին հման
Յուսայի միայն լաւին, բարիին:

Ա՛խ, ի՞նչ անգոր ենք մենք ու եղկելի
Երբ կը վերածեմք ուղեղները մեր
Սեւ սեւ խոհեռու մեծ խառնակոյսի,
Երբ կ'ըլլանք երկինք՝ ուր չկան աստղեր:

Ա՛ն, 'թէ մեր սթրսն ալ օրուան ճենդէն էսք,
Այս երեկոյեան պէս ջինջ ու խաղաղ,
Կարենար սրբէջ ցաւի ամէն հետք,
Ու քիմաւա՛րք Մեծ Գիւրեմ փնտրել:

Աւանամուտի հանդա՛րս երեկոյ,
Բեր անդորութիւն հոգիիս խռով.
Թող ըլլայ վիւսօս ինձ համար անգոյ,
Թող արբեմամ ես մէկ Մեծ Երազով ...:

Գ. ՃԱՐՏԱՐ

ԳԵՂԱՎԱՆ

ԳԵՂՈՆ՝ Ի ՊԱՏԻՒ ՀԱՅԵՐԵՆ ԼԵՁՈՒԻ ՏԱՌԵՐՈՒՆ ՈՒ ԲԱՌԵՐՈՒՆ

(Ս. Թադմանյաց Վարդապետաց օգնին առիթով —
Տօն ի յիշատակ գրսւթ Նշանազարց Հայոց)

Ո՛վ երկնապարգէն տառեր Մեծորպե-
նուն, բառեր Հայկազեան լեզուին մեղրա-
նոր, ձեր օրհնափառն ներկայութիւնը
վայելելու առիթը ունի՞մ ամէն օր, ձեր
մտերմութեան մէջ ապրելու և շնչելու
անպարտադրելի երանութիւնը ինձի հետ
է ամէն ժամ:

Ո՛վ դուք բառեր իմ բխրացումն
լեզուին, դուք իմ մաքր ջուհ առ սնունդ,
իմ հոգիի քփոփ առ կողքոյր. իմ ցեղի
զրան առ նպատակութիւն:

Ինչպէ՞ս կրնամ կասեցնել թափը՝
պաշտամունքի օտնամաններուն մօտեցող
իմ սիրոյն. հանգէ՞ց ձեզ առ ձեր հնարքի
անուգական վարդապետին փառք առ
օրհնէ՞նք անոր պայծառ յիշատակին առ
ձեզ յղկող առ երանգաւորող բոլոր հայրա-
դիրներուն, լեզուաբաններէն մինչև հա-
մեառ քանաւորն առ գիւղացին:

Ո՛վ դուք բառեր Հայկազեան լեզուին,
մանչցայ ձեզ բոլորդ առ սիրեցի, անհու-
նօրէն սիրեցի, արովհետեւ իմ արքայանեղ
նախնիքներուն ջանքին առ քրտինքին
արդասիքն էք դուք, անոնց մեղք ձգած
ամենէն թանկ, անփոխարինելի առ ան-
կապաւորի հրեմուհի Սիրեցի ձեզ, վասնզի
անոնց արեւորաղմ բայց միշտ լուսապա-
րօտ արաին արափն է ար կ'արեւադանգէ
ձեր մէջ, անոնց քաղիւն առ ցոռառատիւ
չգիտցող կամքին տանգածագործափաղաղիչ
նուրն է որ կը ճառագայթէ ձեր մէջէն:

Ինչպէ՞ս չսիրել ձեզ անսահման սի-
րով, որք ձեզմով է որ բացառեցան բե-
քանները իմ սրբապետք պապերուն, որք
ձեր խողովակով է որ նոսեցան նրկային
օրհնութիւնները մեր լուսադեղ հայրենի-
քին վրայ, որք ձեզմով է որ բացառեցան
իմ ալ յրթները, մօրս սիրապէզ գգուանք-
ներուն ընդմէջէն:

Նորեկացիին ազօթամբունջ հեծե-
նանքները կը լսեմ ես ձեր մէջէն, Շնորհ
հալիի հոգեշունչ մեղեդիներն առ առդե-
րը, ձայնները Վարդանի մարտահրաւէր
շեփոխներուն առ Ղեւոնդ Նրէցի մարտա-
գոռ առ սաղմաշունչ ճառերուն: Կածն առ
կականը Մեծ Նշեանի քիւրճաւոր գոհերուն
առ ցնծադին չաղթերգը Ստորարտադար
համբաւելի հերոսներուն:

Ո՛վ հայ բառեր, ձեր մէջէն ինձ լսեց
կառ գոյց Նաւասարդեան աշխարհախառը
կայսրատներու խնդն առ խնձիղը ան-
գամ, ցնծադին գոռառ-գոշառը Սուրբ
Նրկրի օտնամաններուն մօտեցող Տիգրան
Մեծի չաղթական քանակներուն, առ ճար-
նատիւնը՝ Լուսաւորչի ձեռամբ հրդեհառած
հայաշխարհի բազիններուն առ մեհան-
ներուն, որք չէին զգեցուցած ձեզ գեռ
պամմաւունը հարազատ առ մեծվայելող,
առ կը տառապէիք օտարին նեղ առ խորթ
տարաքին մէջը կծկուած:

Մեր քառերը մէյմէկ ապրող, շնչող,
քաքախող սիրտ են, իւրաքանչիւրը իր
պատգամովը հրեղէն, իր տենչերովը վառ-
մափառ առ երազներովը արծուկթաիւլ,
Իւրաքանչիւրը բերդ առ մօրեկոյ՝ տառ
թուծեան հովերուն առ դաւերուն գէժ:

Ու տակաւին, անոնց մէջ կը խառնան
հանճարն առ բարութիւնը քերտաւոր հայ
սեբունդներու, Դրխաուսի սիրոյն պա-
տարադուող առ նահատակուող սեբունդ-
ներու: Կը հայելիանայ անոնց մէջէն հա-
յառ հոգին, կրանիթեայ իր հաւատքով
առ պղծպատակուռ կամքով, առ կը տրոփէ
հայուն սիրտը, իր կենսաթրթիւն առ ի-
մաստուն լաւատեսութեամբ:

Ու դուք կ'անցնիք ամէն օր մասնե-
րուն արանքէն, ո՛վ այնքան անոյշ, այն-
քան արեւամբ բառերը մեր լեզուին: Ու
կը թառիք շուրթերուն՝ անպատում քաղց-
բութեամբ: Ձեր ներկայութիւնը կ'ամբա-
պնդէ իմ մէջ հաւատքը՝ արմենական իմ
տանգածագործ ժողովուրդին նկատմամբ,
առ կ'աւելցնէ նպատակութիւնը այն փառ-
քին համար՝ զոր մեր պապերը կերտեցին
ձեզմով, ոգեկան այն պերճաւոր ապա-
րանքներուն համար՝ զոր անոնք այնքան
ճարտարօրէն կառուցին վանաշունչ այդ
բառերով, այնքան հկուռ առ կերպընկալ:

Ո՛վ հայ բառեր, դուք իմ մաքի կենսածոր աւիշ, թող իմ չեղուն կտի իմ քիմքին, եթէ օր մը ապերախութիւնը դործեմ ձեր մեղրին փոխարէն օտար բառերուն թո՛յնը ընկալելու իմ չրթներուն, յարաբերելու համար ձեզ քիչ թէ շատ ծանօթ ազգակիցի մը հետ:

Կը ներքէք տնշուշտ ար գործածեմ երբեմն ձեզմէ ազգայնէրն ու կճողները, խաբանելու համար ձեզմէ հեռացող, ձեզ զքող իմ ցեղակիցները, ձեր իւրաքանչիւրի հատին կեցող ոյժն ու բարիքը կառմաւարապէս տեղիւնդ առնելու ձեռքնդ (ներքեցէ նաեւ անհարակուսեանս, դառնաք հարազատօրէն պիտակել փորձող բառը հշդէլ չկարենալուս):

Ո՛վ հայ լեզու, դուն ամենաբոյժ աղիւսին՝ օտարութեան մէջ ամէն օր քիչ մը աւելի ժողովելու սո՛մանաւած հայ հոգիին, դուն բաւառանք՝ տարաշխարհի մէջ ամէն օր քիչ մը աւելի հիւժող ու հիւանդացող հայ ոգեկանութեան, Անձրեւէ հայ մաքի հեղանակէ ամլացող ու խաղաղացող անդառառնին վրայ, անմահական ու կենդանարար ջուրերովդ սոռոգէ մտաշխարհը՝ հայրենիքի կենսատառ արեւէն հեռու՝ ու զոսրկ հայորդիներուն, ու թող անոնք ոչ միայն քեզ չմոռնան, այլեւ, փրենց հայրենաբնակ համարիւն եղբայրներուն հետ, քեզ առաւել եւս ծագեցնեն, կոկեն ու գեղողորդեն, յղկին ու պայծառացնեն, որպէսզի այսօրեւեմ ալ անվահերթէն կուրծք տառ դարերու փոթորիկներով եւ հողաբորէն ու յաղթականօրէն հասնիս յաւերժութեան սեմին:

Գ. ԶԱՐՏԱՐ



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԲՆԱՆՈՒՄ

ԱՐԻՍՏԱԿԷՍ ՎՐԴ. ՍԵՐԱՍՏԱՑԻ

(2. 1365 - 1432)

Ծնած է ԺԴ. Դարու երկրորդ կէսին սկիզբները մօտաւարապէս: Աշակերտած է Երզնկացի Գեորգ Վարդապետին († 1416): Եղած է գրիչ եւ կաղմուչ: Ունեցած է աշակերտներ, որոնցմէ իբրեւ գրիչ ծանօթ են Յովնանէս արեղայ, Մարգարէ արեղայ՝ որդի Աւետիքի եւ Աննայի, Յովսէփ արեղայ՝ որդի Յակոբ Ժառանայի, եւ Սիմէոն արեղայ: Մեկնեցի՝ որդի Ուսուսպէկի: Վախճանած է 1432 թուին:

Արիստակէսի մասին Ղազար կրօնաւոր 1409ին, Աւագ Վանքի մէջ կը գրէ. «Այլ եւ զեղբայրս մեր ըստ հոգոյ, եւ զանընդակից մեր եւ զնորընծայ եւ զշնորհալից եղբայրս մեր զԽառակէս, որ դայ եւ քանի սիրող է եւ ցանկացաւ աստուածային իմաստիցն... Սա եւ մեզ աւգնական եղև ի գործս գրել եւ ի կապել...» — Յուլիան 2 հա. Ս. Յակոբեանց, Դ. Հատար, էջ 180, 2 հա. Ս. Յ. Թիւ 1105:

Նայն ձեռագրին մէջ Արիստակէս ալ յիշատակագրութիւն մը ունի, ուղղուած Խէր Ղազարին:

«Ով եղբայր իմ սիրալի, ու ապաստաբ Տեառն քանի, [գէ՛ր, աշակերտեալ մի՛մ բարունոյն փէռաբաւար. հաւրն իմոյ բաղմբարխտի, Խէր Ղազար առաքինի, եւ կրսնաւոր խիտ ի մարմնի, Արիստակէս Սեբաստացի, քր զսակաւ գիրա գծեցի, րնկաւ սիրով եւ լիւր անմեղադրելի. Թէպէտ ի տուն տալն զքեզ վիրաւոր եցի:

եւ այսքան զոր եւ քերեցի...» — Նոյն, էջ 159:

Արիստակէսի մասին յիշատակութիւնն ունի նաեւ Յովնանէս Երզնկացին, 1413ին, Ան կը պատմէ.

«Ժամանակս ինչ գեղերեալ հղէ առ
սոս երջանիկ րապունայեան իմայ Գեոր-
գայ և ապա, չուեալ իմ զամբռան հա-
մալսարանի տանս արեւելան, ցանգաց
և զսոցա տեսանել, և աղօթիւք սրբոց
հասի փափագանացս, եւ ժամանակս ինչ,
իբրեւ ամս երկուս անցեալ, և միծ բա-
րունին Դրիգորիոս փոխեցաւ յառեանց
առ Քրիստոս, և անմիթար սուգ եթող
համայն ազգիս... Եւ յետ ժամանակաց
ապա յայցելութեամբ տեսան եկն առ իս
անն յեղբարց իմոց յառաւմասիրոց՝ Ղա-
զար սպառաւոր բունի, և ապա սովաւ
փարատեալ եղև արամութիւն իմ յառա-
ւութեան աստ: Եւ յետ սուգ ինչ ժամա-
նակի, գարնեալ անն բարեկամ եղբայր և
առաւմասիկց մեր հնաւ առ մեզ՝ Առիստա-
կէս անուն, որ և սո սիրուգ և սպասա-
ւոր բունի, յորմէ ոչ սակաւ դիւրութիւն
եղև մեր առաւապանացս, եւ եկեալ ի միտս
մեր հեղ. ի որոն դառնալ անդրէն առ
հոգեւոր հայրն մեր Գեորգէոս... Երկու-
շիք... և առ զհամշիրակ եղբարքս իմ՝
զՂազար և զԱռիստակէս, որոց ես հղէ
պատեաւ առաւմութեան սոցա, ի բնական
տեղոյն և ի վարդապետէն և առաւմասի-
րոցն: — Երկու. Ժ. Դարի, Ա. Մասն,
էջ 142 — 143:

Հոս կը բերենք իր մասին քանի մը
յիշատակութիւններ ալ՝ որոնք իր աշա-
կերաներէն:

1. — Յովնանէս արեղայ, 1424ին կը
գրէ Երուսաղէմի մէջ. «Երկուշիք... և
զբարեւնի վարդապետքս մեր, զհեղանդի
Արիստակէս և զԼեւիքիսէթ, և զԵմկոր
հղնաւոր արեղայ, որ ի յաղորդին ազգանկան եղեն
և ի խաղելն: Եւ զկուսակրուն արեղայ
զՍիմէոն Մելանցի որ ծաղկեաց, և զթղթի
կոկոզան...» — Յուլիոս Զեռ. Ս. Յակոբ-
եանց, Ա. Հատոր, էջ 218: Զեռ. Ս. Ե.
Թիւ 67:

2. — Մարգարէ արեղայ, 1432ին կը
գրէ Աւագ Վանքի մէջ. «Երկուշիք և
զհոգեւոր ուսուցիչն իմ, զԱրիստակէս
բարունայեան, որ յայսմ ամի առ Քրիս-
տոս փոխեցաւ: և Յուլիոս Զեռ. Ս. Ե-
կաթեանց, Զ. Հատոր, էջ 507: Զեռ. Ս. Ե.
Թիւ 1948:

3. — Յովնէփ արեղայ, 1432ին կը գրէ
Կիւրդի Անպատին մէջ. «Երկուշիք և
ճոռուցիչն իմ զԱրիստակէս վարդապետն,
որ բազում աշխատութեամբ ուսոյց մեզ
զգիրս, և ինքն ի Քրիստոս փոխեցաւ: —
Յուլիոս Զեռ. Ս. Երաստիոյ, էջ 51:

4. — Սիմէոն Եղս. Մելանցի 1435ին
կը գրէ. «Երկուշիք... ճոռուցիչն իմ...
ի դասուց սուրբ վարդապետից զԱռի-
ստակէս վարդապետն, և զտէր կարապետն
...» — Յուլիոս Զեռ. Ս. Յակոբեանց,
Թ. Հատոր, էջ 412: Զեռ. Ս. Ե. Թիւ 3153:
Արիստակէս Սեբաստադիի գրչական
աշխատանքներէն ծանօթ են նաեւ հայերէն:

1. — Մանուսմունց, գրած է 1405ին,
Աւագ Վանքի մէջ. — Երկու. Ժ. Դարի,
Ա. Մասն, Թ. 55: Զեռ. Երեանի, Թ. 753:

2. — Մանուսմունց, օրինակած է
Աւագ Վանքի մէջ, 1408 թուին, Աւանք
կրօնաւորի համար: Մաղկոյ՝ Վարդան —
Երկու. Ժ. Դարի, Ա. Մասն, Թիւ 864
Զեռ. Երեանի, Թիւ 763:

3. — Մանուսմունց, 1409ին լոյս
շատպով գրած է Աւագ Վանքի մէջ,
«Վասն առաւել դառնութեան ժամանակին»:
Մաղկոյ և կազմող՝ Վարդան արեւմտադ. —
Յուլիոս Զեռ. Մշոյ, էջ 109:

4. — Լուծմունց Խնասասերական Գրոց՝
Յովնանու Որոտեցեայ, օրինակած է
1412ին, Աւագ Վանքի մէջ. — Երկու. Ժ. Դարի,
Ա. Մասն, Թիւ 142: Զեռ. Երեա-
նի, Թիւ 1701:

5. — Ոսկեփորիկ — Ժողովածու, Դրի-
գորի Տաթեացեայ, օրինակած է 1412ին,
Աւագ Վանքի մէջ, «առ ի վայելումն առ-
աւմասիրաց եղբարց, որոց և լիցին» —
Երկու. Ժ. Դարի, Ա. Մասն, Թիւ 143:
Զեռ. Երեանի, Թիւ 5118:

6. — Գերութենէ աղատուած Աւեսա-
բանի մը պաշտարանները գրած և կազ-
մած է Աւագ Վանքի մէջ, 1413 թուին.
— Զեռ. Հայկ. Թիւ 37:

7. — Ժողովածոյ, գրուած հաւանաբար
Աւագ Վանքի մէջ. — Զեռ. Երեանի, Թիւ
57:

Ն. ԱՐԳԵՊՍ. ԵՈՎԱԿԱՆ

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

Ի Յ Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ե Ղ Ա Ջ Ա Ր Ո Ւ

Երանելոյն Թէոփիլեայ ազացեալ ի Յարութիւնն Ղազարու չորեֆորեայ, եւ ի Բոսն ի Մարիամ եւ ի Մարթա, եւ ի Դաւիթսն Որդւոյն Աստուծոյ՝ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այր աստ զհրէիցն խաւարեայ սիրտս նշանակէ, եւ վէժ զծանրագոյն ի վերայ զանհաւատութիւն նոցա, վասն որոյ ցնոսա հրամայեալ ապէր. Ի բաց արարէք զվէժդ՝ զծանրութիւն բնոին զժուարակիրն օրինաց, զի զկենայար շնորհացս առ զիք գրան: Ի բաց արարէք զվէժդ, զի վարդահոստութիւն¹⁶ նեխեալ մեռելոյդ կալցէ զհաստաւորս շնոր: Դուք, ասէ, բարձր ի բաց, եւ ոչ աշակերտող իմ. զի դուք լինիք վկայք եւ ոչ դոքայ. զի մի՛ առիցէք, որպէս վասն կուրին ասէիք, եթէ սա ոչ է նա աչ նման է նմա:

Ասէ ցնա Մարթայ՝ քայր մեռելոյն. Տէր, արդ հոռեալ է, քանզի չորեքօրեայ է: Դարձեալ անհաւատութեան եւ երկպառակութեան է քանս. զի ի մեծամեծ սքանչելիսն անհաւատութեանն ախտ տեղի գտանն յսովորէ. եւ վկայ Քրիստոսի ասելն. մի՛ ասացիք թեզ, ասէ, եթէ հաւատասցես՝ տեսցես զփառսն Աստուծոյ: Այսու զՅերակատար հաւատոյ նորա զեկուցանէ, զի յեւ եւս ազատեալ գոյով յերթայական ախտէն, եւ վասն այնորիկ սխալականս¹⁷ առնէր զպատասխանին: Իսկ Յիսուս գալսն ի վեր ամբառնալով ասէ. Հայր, գոհանամ զքէն, զի լուար ինձ, եւ ես գիտէի զի հանապազ յեսն ինձ, այլ վասն ժողովորդեանս, որ ջուրջ կան, առնեմ, զի հաւատասցեն եթէ դու առաքեցեք զիս:

Լսելով զայս, ով սիրելի, մի յերկուանար նուաստագոյն իմն համարեալ զմարմինն քան զբանն, այլ հաւատար եւ ճարթ. քանզի ուստի խոնարհեալ էք՝ անդ հայեցաւ, ձգելով զբանն առ Հայր՝ համակամութիւն ցուցանելով նմա: Նա եւ յաղպաս հրէիցն տնօրինեալ ցուցանէր զայն առ ի հաւատալ նոցա՝ թէ Որդի էր (յ) Աստուծոյ, եւ Աստուած եկեալ ի վերուստ, եւ ոչ Աստուած հակառակ Աստուծոյ, որպէս կարծեալ ապին.

Եւ զի սառգապէս մարդ լեայ՝ մարդկաբար խօսելով հայէր ի վեր, զի մի առ աջօք կարծեսցեն զճշմարիտն մարմնաւորութիւն. եւ դարձեալ աչ ասաց՝ լուր ծայնի իմում, այլ թէ լուար. որով ստուգապէս գիտէ, զի իրեւ զկատուած կարող էր. նա եւ զի Հայր անդ էր աստուածութեամբ՝ միակամ, եւ մի խօրհուրդ զիրն եւ¹⁸ զՀօրն ցոյցանէր¹⁹:

Եւ զայս իրրեւ ասաց, ի ծայն բարձր ազաղակեաց եւ ասէ. Ղազարէ, եկ արտար: Եւ իսկոյն ել(եալ) մեռեալն²⁰ ոտիւք կապելովք. եւ ձեռքն երիզապնդօք, եւ երեսօքն վարդամակապատօք:

Արդ՝ որ ոք յաղթն իրկրայացաւ, աստ ստոյգ ճատատեսցի, զի ոչ մաղթեաց եթէ յարոյց) զեւ Հայր, այլ տիրաբար ծայնեալ՝ եկ արտարս²¹: Թագաւորական էր ծայնն, եւ տիրական, նա՛ թէ՛ եւ աստուածական²² իսկ:

Չայնն մարդոյ լսիւր, եւ գործն Աստուծոյ տեսնիր:

Չայն եւ լուր ի մի բերանոյ, եւ նոյն մարդոյ եւ²³ Աստուծոյ: Ջի որպէս ծայնն այն յերկուս ծայնս ոչ բաժանի երբէք եւ ոչ ճանաչի, այնպէս եւ ոչ աստուածութիւնն

¹⁶ զի դարձաւ տեղիս ձեր ի ¹⁷ սխալանս ի ¹⁸ Ձունի եւ թ. Մ Անի ծայնեալք ի գերեզմանն Ղազարու. եւս ի ծայնն մեծ եւստէ. Ղազարէ, որի եկ արտարս: Եւ իսկոյն եւ մեռեալն է ¹⁹ Ձունի՝ Արդ ... եկ արտարս է ²⁰ աստուածաբար ի է ²¹ Ձունի, եւ ի է

և մարդկութիւնն բաժանեալ ճանաչին ի միմեանց: Ձայնէր որպէս զմարդ և յարուսեալէր իրեն: զկատուած:

Ձայնն կանաչաւ լողացն մարդոյ, և գործն ի խորս ստեղարամետականացն՝ Աստուծոյ. որպէս ոչ լուր ծայնին և գործք արդեանցն բաժանին, այնպէս և ոչ ատուածութիւնն և մարդկութիւնն: Զարթառ ծայնին⁴⁴ մարդոյ լուան հրէայքն և ոչ հաւատացին, և քնոյն ծայնն Աստուծոյ համարելով՝ ի դժոխան գնդոյն Ղազարոսի ոչ արգելին:

Ձայն մարդոյ լսելով աշակերտացն, և ծայնին այնու զհոտեայն և զապականեայն յարուցանէր, որով զարհուրեալ տաէին. Եթէ մարդ է և իրեն Աստուած գործեաց: Եւ զծայնն ի դժոխս լսելով հիացան, ճանաչելով թէ Աստուած է, և իրեն մարդ ծայնեաց: Յառաջագոյն զծայնն մարդոյ լուան Մարթայ և Մարիամ, և զգործն յարութեան չորեքօրէին տեսանելով սքանչացան յոյժ⁴⁵:

Ձայն մարդոյ լուան գիրեզմանն և դժոխքն, և իբր ծայնիւ Աստուծոյ դժոխքն⁴⁶ զհոգին⁴⁷ մարմնոյն քննեաց, և գերեզմանն զմարմինն կենդանի առաջի ծայնողին կանգնեաց, որ ծայնէր՝ ինքն⁴⁸ մարդ երեւէր, և ծայնիւ նորա չորեքօրեայն յառնէր, զի Աստուած էր և Տէր: Գանգի աստուածային բնութիւնն ընդ մարդկութեանն միաւարելով գործէր զայս. զբաժանեալ հոգին ի մարմնոյն ի մի միաւորելով շնորհէր քեցն:

Էր ի Բեթանիայ և ծայնէր Ղազարոս ի գերեզմանն, և նոյն ծայն ի դժոխս արծակող լինէր հոգւոյն, զոր ի լսելն սասանէին անգունդք: Կրկնեցից զբանս, զի սքանչելի է խորհուրդս: Էր յերկինս և ի ծոց Հօր, և ի յերկրի զնա Մարթայ և Մարիամ տեսանէին, և շրջէր յերկրի մարդաբար⁴⁹, և յերկինս Գարրիէլ և Միքայէլ նկատել ի նա ոչ զօրէին. Էր ի գերեզմանն Ղազարոս, և յերկնից ոչ էր պակաս ամեննին. և առ յերկինս էր՝ նոյն և ի գերեզմանն բոլորովին. որ աստ ի Բեթանիայ՝ նոյն և ի դժոխս հոգոյն⁵⁰ ազատումն առնէր, և Գարծեալ աստ գօրով՝ զմարմինն յարուցանէր. անդ զԵբրահեայն արծակէր, և աստ զապականեայն նորոգէր⁵¹:

Ով սքանչելեացս, յերկինս էր և ի նմանէ հրիշտակքն զարհուրէին, նոյն և ի դժոխս և սակեարմետոյ ի նմանէ դողային. նոյն ի Բեթանիայ ցարծեալ մարդ տեսաւ իւրի. և յերեւեալ մարդոյ անտի (յ)երկնիքն դողային, զժոխքն սասանէին⁵², մահն հալածիւր, ճոտեայն նորոգիւր, գերեզմանն, զոր մեռեալ առ, կենդանի հաստուցանէր:

Ամենայն տարերբոս այսորիկ այսպէս հպատակէին, և հրէայքն զգործողն այսմ ամենայնի իրեն այր մի լոկ սպանանել խորհէին, զոր յետ⁵³ սպանանելոյն Ռեթանոսք զմեռեայն կատարեալ Աստուած խոստովանէին: Ով հրաշիցս սքանչելի, որ յՂազար⁵⁴ կատարեցան: Լուաւ ամենատունն ի նահապետէն Աբրահամու թէ չգոյ ինչ հնար ումեք անցանել աստի այդք, քանզի վիհս մեծ է, որ ի միջի մերում է, և նա ինքն զվիհն գայն մեծ և զանբաւ՝ որպէս սակաւ ինչ և զնոբք միջոց՝ դիւրաբայլ համարեցաւ: Վասնզի մի ծայն միայն մարգացելոյն⁵⁵ Աստուծոյ. զմեռեալ մարմինն կենդանացոյց, և զկենդանացեալսն ի նմա գորդուան մահացոյց, զինքեայն նորոգեաց և զհոտեայն մարբնաց, զապականեայն վերստին ստեղծեաց, որով իսկոյն յարեաւ պատեալն՝ ոտիւքն կապելովք և ծնոօքն երիզապնդօք:

Եւ այս վասն անհաւատութեան հրէիցն զարծեցաւ. զի թէ զանդամս նորա ինքեանք ոչ էին պնդեալ պատասօք, զերեսն վարչամակապատօք, ի զէպ էր տեսի նոցա թէ ոչ սեռաւ նա, այլ՝ այլ ինչ նմանութիւն մեռելոյ կերպարանաւ եւեթ եղաւ ի գերեզմանն⁵⁶, բայց ի գալ նորա արտաքս՝ ստուգեալ⁵⁷ ծանեան զի նա ինչև Ղազարոս էր, որ նոցին ծնօքն պատեալ եղաւ ի գերեզմանի անդ, և ծայնիւ եկեալ այն ինչ առ

⁴⁴ Ձուկն՝ ծայնին է ⁴⁵ Ձուկն՝ Ձայն մարդոյ ... սքանչեացն յոյժ է ⁴⁶ Ձուկն՝ զժոխքն է ⁴⁷ Ձուկն՝ զհոգին է ⁴⁸ Ձուկն՝ ինքն է ⁴⁹ մարդկաբար է ⁵⁰ հոգւոյն է ⁵¹ Ձուկն՝ Գարծեալ է ⁵² ասանէին ⁵³ Ձուկն՝ Գետ ⁵⁴ ի Ղազար է ⁵⁵ մարգացելոյն է ⁵⁶ ի գերեզմանն է ⁵⁷ արտաքաւ է

նա մարդարար՝ դժոխքն զհոգին արծակեալ, գերեզմանն զմարմինն ետ կենդանի: Մարիամ եւ Մարթայ յարութեամբ եղբորն ուրախացան, դժոխոցն իշխանք⁶⁸ խռովեցան, մեռելոցն⁶⁹ հոգիքն, որպէս ի քնոյ զարթուցեալք, եւ բերկրելով ցմիմեանս⁷⁰ ասէին. զի՛նչ է ծայնս, որ զդժոխս խռովցոյց, զմեռեալն⁷¹ կենդանացոյց, եւ զամիննսեան զմեզ զարթոյց: Որով թէպէտ եւ բանտապետս խռովեցան, այլ աստ ի միջի մերում յանկոյլս աղբամղջի՝ որպէս լոյս ծաւալեցաւ՝ կարօտելոցս յոյժ տեսութեան լուսոյ. ո՞ր գիտէ գուցէ շառաւիղս այս առիթ լիցի մեզ յաւիտենական լուսոյն:

Եւ ո՞ր է ասնն ծայնս այս, կամ ո՞ւմ ծայն զօրէ այսպէս զօրաւոր լինել. ծանեաք զի ծայնն մարդոյ իսկ էր. եւ հիանամք թէ զիա՞րդ բարբառ մարդոյ զօրէ ի խորոք դժոխոցս լսելի լինել. կամ զիա՞րդ լսելի լինելով՝ այսպիսի լուսով պայծառանայ, մինչ զի շառաւիղս արծակէ ի մէջ խաւարի սոյս աղբամղջին:

Ջայս ամենայն խօսելով ցրեաբար՝⁷² ժողովեցան առ նախահայրն իւրեանց եւ ասնն. Ով Աղամ, լուա՞ր երբեք այսպիսի ծայն:

Լուայ, ասէ, մինչ ի դրախտին էի, զի ծայնեաց. Աղամ, տ՛ր ես, այլ մարմին ոչ ունէր որ խօսեցան, որոյ եւ ծայնն որպէս սպառնալիս տանջանաց երկեցոյց զիս: Ջայնս այս այնմ նմանեցաւ⁷³, այլ այս իբր աւետիս(ս) աղատութեան ի կապանաց աստի, ուրախացայց զիս յոյժ եւ զծնզ. զի ծայնս այս ի խաւարի աստ լուսաւորեաց, եւ ոչ ի խաւար աղբամղջին խորեաց. զայս իմ երաց լուսով եւ ոչ միջացոյց միգով, զուարթացոյց զիս յուսով եւ ոչ տրամեցոյց ոգւով⁷⁴:

Ասնն ցնա հոգիքն. մի՞թէ ապա կրկին ծայնեաց քեզ: Ջայն, ասէ, լուայ բայց Աղամ ոչ լուայ այլ Ղազարոս: Ասնն նորա. Եւ ո՞վ է Ղազարոսն այն⁷⁵: Ասէ նա. ոմն մի եկեալ եղիտ զիս աստ եւ ասէ. ով նախահայր իմ, տեսի անշ⁷⁶ ոմն ի կուսէ ծնեալ, զոր որդի Աղամայ ասէին: Եւ նա զորոտս սրբէ, անդամաւոյնս կանգնէր, զկոյրս լուսաւորէր, զմեռեալս յարուցանէր, եւ մեծամեծ քանչիւնիս գործէր՝ Եթէ նա, որպէս⁷⁷ լուայ, որդի քոյ իցէ, յորժամ խնդիր արասցէ քեզ, գիտեմ զի կարող է փրկել զքեզ⁷⁸ ի խորոց աստի դժոխոցս, թերեւ եւ ոչ զիս անտես արասցէ, վասնզի բարեկամ իւր անուանէր⁷⁹ զիս եւ սիրէր յոյժ⁸⁰: Յանկարծակի ծայն իմն ահաւոր հնչեալ՝ այսր⁸¹ յափշտակեաց զնա, եւ ահա⁸² այժմ ոչ է աստ.

Ի խօսելն զայս Աղամայ ցնուսա, ահա⁸³ դժոխապետն փութալով ի գերեզմանն հարցանէր, ո՞ր է Ղազարոս: Ասէ ցնա գերեզմանն. զի՛նչ խօսիս, ես զսուրբական գործն իմ կատարեցի ի մարմինն նորա առ ի ննխել եւ յապականել:

Դժոխապետն ասէ. Եւ արդ ո՞ր է ննխեալն եւ ապականեալն: Գերեզմանն ասէ. բեր այսր զհոգի նորա եւ ես վաղվադակի զմարմինն տայ: Դժոխապետն ասէ. Ժայն իմն վանեալ զիս՝ յափշտակեաց զհոգի նորա յինէն, որոյ թէ հնար էր հոգոյն մեռանել⁸⁴ եւ ապականիլ՝ ոչ էր ազատեալ⁸⁵ ի ձեռաց իմոց:

Ասէ գերեզմանն. յորժամ դու զանքանականն գործելով զգոյացեալ հոգին թուլացուցեր մտանել ի ստեղծական մարմինն, ես նոյնպէս⁸⁶ զանակուռնելին⁸⁷ յինէն կատարեցի⁸⁸: Յորժամ մեռեալ եւ ննխեալ մարմինն առ իս հոգով⁸⁹ կենդանացաւ՝ չկարացի ըմբռնող լինել եւ արգելել. այլ արծակեցի⁹⁰ փութանակի: Ջի ծայնն⁹¹ այն, որ այնպէս հեռագոյն գոյով, կարօց ի խորս անզընդոց զհոգի նորա ի քէն յափշտակել՝ զստեղծեալն յինէն եւ զեղեալն յիս զիա՞րդ⁹² ոչ կորզէր, որ մերծ եւ հուպ գոյով դրանս իմ ծայնէր նմա:

⁶⁸ Գժոխոց իշխանքն է. ⁶⁹ մեռելոց է. ⁷⁰ ցմիմեանս, Ժ, ամիմիեանս է. ⁷¹ կենդանան է. ⁷² ցրեաբար է. ⁷³ Ջուկի՝ Ջայնս ... նմանեցաւ ի. ⁷⁴ յաղով Ժ, որով է. ⁷⁵ Ասէ ծայն լուայ բայց ոչ Աղամ, այլ Ղազարոս Ասնն նմա. Ղազարոսն ո՞վ է այն: ⁷⁶ Ջուկի՝ ամն մի եկեալ ... տեսի անշ ի. ⁷⁷ Ջուկի՝ որպէս է. ⁷⁸ փրկել եւ զքեզ է. ⁷⁹ ան նախէր ի. ⁸⁰ սիրէր զիս յոյժ է. ⁸¹ Ջուկի՝ այսր է. ⁸² եւ ահաբեկեալ է. ⁸³ Ջուկի՝ այժմ ... ցնուսա, ահա է. ⁸⁴ հոգւոյն մեռանել ի. ⁸⁵ ոչ կարէր ազատիլ է. ⁸⁶ Ջուկի՝ մարմինն, եւ նոյնպէս է. ⁸⁷ ուռնելին է. ⁸⁸ կատարեցի է. ⁸⁹ հոգւով է. ⁹⁰ Ջուկի՝ լինել ... արծակեցի ի. ⁹¹ չկարացի ըմբռնել, զի ծայնն է. ⁹² ա՞րդ է. ի.

Երթ արդեւ զգուշացիր հոգոց⁹³ այոց, եւ ես մարմնոց⁹⁴, թերեւս զնա կարացուր ըմբռնել, զի մարմին զգեցեալ է: Ասէ դժոխապետն. կարի յոյժ յերկուացեալ⁹⁵ եմ ի նմանի, զի թէ ծայն նորա հասանելով առ մեզ⁹⁶ այնքան զօրացաւ մինչեւ զհոգին յինչն յափշտակեաց եւ զմարմինն ի քէն, եթէ նա ինքն գայէ՝ զինչ անցս որ⁹⁷ ոչ անցանիցէ ընդ մեզ: Ջայս ամենայն ի դէպ էր հանդիպիլ ասել ցմիմանս⁹⁸ դժոխոցն եւ գերեզմանին:

Յորդոքակ

Իսկ մեր միմեանց զայս ծայնելով՝ եկայք այսօր զտօնս ասնեսցուք ընդ Մարթայ եւ ընդ Մարիամ, հոգով⁹⁹ եւ մարմնով ուրախացուք, եւ որք թաղեալքս եմք ի գործս մեզաց, ընդ Ղազարու այս օր ապաշխարութեամբ ի վեր յարիցուք, եւ նեխեալքս ի տիպիմ յանցանաց՝ ընդ չորեքօրեայ նեխեալն նորոգեսցուք:


Փոխանակ ի Բեդանիա գնալոյ յեկեղեցիս ընթացուք, փոխանակ կենդանի ծայնից առաքելոցն՝ ծայնի աւետարանչին¹⁰⁰ լուիցուք, ընդ Թումայի ասելով. օն, եկայք զի¹⁰¹ ընդ նմա զմեղացն (յ)անդամս սպանանելով մեռցուք, զի ի գալստեան նորա՝ առաջի նորա արդարացեալք յարիցուք, եւ յայգույն ծերոցն հետեւելով՝ չարեացն զործոց տղայք երեւեսցուք. ընդ տղայսն առաքիլեցեալք¹⁰² ծերունաբար իմաստնացուք, եւ յառաքեալք եկեղեցեացն հանդիպեսցուք, փոխանակ յաւանակի¹⁰³ երկին ի յերկրի գսեղանն տեսցուք, թողով զմարմնական զբաղմունս, որպէս տղայք զստինս մարցիւրեանց՝ զՔրիստոս աւրհնեսցուք:

Ընդ աշակերտսն զինի նորա հեպով¹⁰⁴ ընթացուք, էջ եւ յաւանակ¹⁰⁵, զհոգի եւ զմարմինս մեր, ասեմ, որք կապեալ են մեզօք արծակելով ապաշխարութեամբ առաջի նորա ածցուք, յորոց վերայ բազմիլ եւ հանգչիլ հաճեսցի: Ընդ փառաւորեալն վասն Երուսաղէմի խօսեսցուք. ընդ Դաւթայ, զլեզուս մեր յերգս արկեալ, ոչ ստուերօքն այլ ճշմարտութեամբս. ասացուք. ի բերանոց մանկանց տղայոց հաստատեսցի աւրհնութիւն քեզ: Ընդ Զաքարիայ՝ զստեղացն Երուսաղէմի ուրախութիւնն քարոզեսցուք, եւ ընդ ժողովրդեանն Սիոնի՝ Ովսաննա ի բարձունս երգեսցուք: Եւ Որդւոյ ընդ Հօր իւրում՝ հանդերձ Հոգոյն¹⁰⁶ Սրբով փառս առաքեսցուք:

(Գար. 17)

Հրատ. Ա. Յ. ՍՐՃՈՒՆԻ

⁹³ Հագուց ի ⁹⁴ Ձուկնի՝ եւ ես մարմնոց ժ ⁹⁵ երկուացեալ է ⁹⁶ քեզ է ⁹⁷ Ձուկնի՝ որ է ⁹⁸ հանդիպիլ ցմիմեանս է ⁹⁹ հոգւով ի ¹⁰⁰ աւետարանչինն է ¹⁰¹ Ձուկնի՝ զի ժ ¹⁰² առաքիլեցեալք է ¹⁰³ յովանակի է ¹⁰⁴ հեպով է ¹⁰⁵ յովանակ է ¹⁰⁶ Հոգւոյն է



ԳՐԱԴՍԱԿԱՆ

SIGNS OF THE JUDGEMENT,
ONOMASTICA SACRA,
THE GENERATIONS FROM ADAM

Վերջերս Ամերիկայի մէջ լույս տեսաւ Michael E. Stone-ի հայագիտական մէկ նոր աշխատութիւնը, որ կը պարունակէ երեք մանր գրուածքներ. Նշանք Դատաստանի, Երբայեցի Անուանք, Մեռնողք յԱզամայ:

Գիրքը կը խաղկանայ 278 էջերէ, որուն բաղկացուցիչ մասերն են,

Նախաբան, էջ IX-XVII,

Մասն Ա. — Նշանք Դատաստանի, էջ 3-57,

Մասն Բ. — Երբայեցի Անուանք, էջ 61-217,

[245,

Մասն Գ. — Ազգ Բրդոնն Նոյի, և Մեռնողք յԱզամայ և Թիւք նոցա, էջ 221-

Ի վերջոյ Յանկ Երբայեցի Անուանք, Index to Onomastica, էջ 247-268,

և Ընդհանուր Յանկ, էջ 269-277:

Հեղինակը նախ կու տայ իւրաքանչիւր բնագրի քննական հրատարակութիւնը, հանդիպակաց էջին վրայ անգլերէն թարգմանութեամբ, և ապա մեկնաբանական բացատրութիւններ: Կ'արժէ նշել որ առաջին բնագիրը ժանոթ է լատիներէն և երբայեցի լեզուներով ալ, որոնք տեղ գտած են հատորի մէջ, վերջինը հանգերէն անգլերէն թարգմանութեամբ:

Նոյնպէս կ'արժէ յիշել երկրորդ մասին վերջաւորութեան գրուած ցանկը 90 հայերէն ձեռագիրներու, որոնք կը պարունակեն Երբայական Անուանները: Հեղինակը կը թելադրէ որ թուագրեալ այդ ցանկը հիմը կազմէ հետագայ հրատարակութիւններու և սուսմաստիքութիւններու:

Հեղինակը քիչ յօդանութիւն կրած չէ կազմելու համար այս հատորը, որուն էջերուն մեծագոյն բաժինը դրաւուած է երկրորդ նիւթով՝ Երբայեցի Անուանք: Անուաններու և բառերու յաջորդական շարքերը քիչ մը չոր նիւթ ըլլալով պիտի կըրնային մաննրացնել նուազ խանգաւառ բանասէր մը: Գր. Ստոնի մանրասոյգ միտքը և մեթոտիկ աշխատանքը յաջողած են յաղթելու բազմապիսի գծաւորութեանց, որոնք կը բխին նիւթին բնայնէն իսկ:

Գրքին ընթերցման ընթացքին հանդիպեցանք դիտողութեան արժանի կարգ մը կէտերու, որոնց մասին մեր նկատողութիւնները կը ներկայացնենք ստորեւ, Նախ կու տանք բնագիրն ու հեղինակին կատարած թարգմանութիւնը, և ապա մեր առաջարկած ուղղումները, բնագրին կամ թարգմանութեան վերաբերեալ, ըստ պարագային:

1. — էջ 24-25 տապալեան

perish
will be thrown down

2. — էջ 27

մեռելնին
die. They
the dead

3. — էջ 33

(Mark 12:27)
(Joel 3:12)

4. — էջ 57

Joel 4:12
Joel 3:12

- Part Two ← Onomastica Sacra
5. — էջ 72-73 *աւարմն նշանագրաց*
teaching of letters
study of letters
6. — » *երեւելի կամ առաջնորդ*
visible or first
notable or leader
7. — էջ 78 *բերեղանմն, էջ 82 բարեզունմն*
բարեասունմն? շրջոյ?
8. — էջ 110-111 *կարդալ*
to set
to read
9. — » *անգոս, unknown word*
Սոգոս, [Սոգոս — Սաւոս]
որ կը կարգադրուի նոյնը՝ ձախէն աջ և աջէն ձախ
10. — էջ 112-113, 120-121, 128-129, 150-151
ապստամբ
rebellion
rebel
11. — էջ 120-121 *խորհրդակա՛ն*
mysterious
counselor
12. — էջ 122-123 *զարհուրեալ*
amazed
terrified
13. — էջ 124-125 *փայլակն*
ray
lightning
14. — » *որդի մխիթարութեան*
son of mercy
son of consolation
15. — էջ 146-7, 163, 189 *բրտտ, դ*
earthen (?)
woolly
16. — էջ 200-201 *բազալիք, լուսոցման տեղիք*
— places of —
բազանիք,
bath, places of washing
17. — » *սեւաւոր*
black
սեւաւոր
dressed in black
18. — » *անթի երաժշտի կամ դործի*
instrument of music or work
instrument or implement of a musician
19. — էջ 210-211 *զօրաւոր*
general
strong

ԶԵՆԱԳՐԱԿԱՆ

ԹՈՐՈՍ ՌՕՍԼԻՆ(*)

Կենսագրական գլխիկ

Ծննդավայրին և ծնողներուն մասին ստույգ տեղեկություններ կը պահպան, բացի անկէ որ իր նախնեաց մականունն էր Ռուսլին: Յայտնի է թէ ունէր եղբայրներ, քոյրեր և որդիներ: Յանուսն է կը յիշուի իր մէկ եղբայրը միայն՝ Անտոն: Ուսած կրօնայ թղթի Հռոմկլայի մէջ, զբուռնութեան և մանրանկարչութեան մեծ վարպետներէն կոչուցի Յովհաննէս Սարկաւազի (1214-1253) մօտ, որ նմանապէս ուսուցիչը եղած է այլ մանրանկարիչներու: Իր գործունէութեան շրջանը, համաձայն հաստատուն փաստերու, կ'ընդգրկէ 1256-1268 թուականները: Այդ շրջանէն մեզի ծանօթ են վեց Աւետարաններ և մէկ Մաշտոց: Թորոս Ռոսլինի վարպետութեան են գործեր, որոնք իրմէ չեն և իր մասին կը պատմուին դէպքեր, որոնք ոչ մէկ կապ ունին իր հետ: Հակառակ ըլլալով ուրիշ գրիչներու և մանրանկարիչներու, յիշատակարաններու մէջ չի խօսուիր իր մասին: Տեղ մը միայն կ'ըսէ թէ կը կոչուի Թորոս և մականունն

է Ռուսլին ըստ նախնեաց, այսինքն ըստ իր նախնայրերուն: Չննք գիտեր թէ ուրիշ կու գոյ այս օտար անունը, Ան չի յիշեր իր հօր անունը, ինչպէս սովորութիւն էր այն ատեն:

Թորոս Ռոսլինի վաւերական կենսագրական գիծերը այսչափ են միայն, ինչպէս կ'ընդունի Փրօֆ. Սիրարփի Տէր Ներսէսեան: Կենսագրութեան մասին տրուած այլ տեղեկութիւններ աւելորդ կը նկատուին մեր կողմէ այստեղ: Այդ շրջանին եղած են Թորոս անունը կրող ուրիշ անձեր. այսպէս՝ Թորոս Փիլիսոփայ և ուրիշներ, որոնց կենսագրութիւնը չի փութուած է Թորոս Ռոսլինի կենսագրութեան հետ:

Թորոս Ռոսլինի ստեղծագործութիւնը

Թորոս Ռոսլին եղած է պալատական նկարիչ: Ան իր մամանակին Կոստանդին Ա. Բարձրագոյնի կաթողիկոսին և Հայոց տրքունիքին լայն հովանաւորութիւնը վայելելով. դարձած էր պալատին գլխաւոր նկարիչը և քահանայապետ Լեւոն Գ. ի սիրականն ու վստահիլին:

Թորոս Ռոսլին իր առաջին Աւետարանը գրած է ծաղկած է՝ 1256ին Հռոմկլայի մէջ, Կոստանդին Ա. կաթողիկոսի համար: Այս Աւետարանը ծանօթ է Ձէյթինի Աւետարանն անունով: Անոր նկարները թէ և բաղդատաւոր քիչ են, բայց անոնց մէջ կան պատկերներ և ձևեր, որոնք չեն երևիր Ռոսլինի ծաղկած միւս Աւետարաններուն մէջ: Ռոսլին միշտ խոստատած է միօրինակութիւն: Ծիւ երևաւ կայտնութեամբ՝ օժտուած լայն տրուեալ. գէտը գիտէ միշտ նոր ձևեր ստեղծել, նոյնիսկ երբ միեւնոյն տեսարանները կը ներկայացնէ կամ նոյն ընդհանուր շեմայի խորաններուն կիսախորաններու կարա-

(*) Միոնի այս թիւն մէջ հանդիպել է որ տեղ կու տանք կրօնական գրականութեամբ հետաքրքրուողներուն իր բեղուն գրիչովը ծանօթ Հոգի. Տ. Վաչէ Ծ Վրդ. Իգնատիոսեանի, մէկ նոր աւտոմատիկութեան վերջին Գլխուն: Գործը, որ լայն պիտի տեսնէ 1982ի ընթացքին Ս. Աթոռայ Տպարանէն, կը կրէ Վայ Մոմրա-ճկարտութիւնը և Թորոս Ռոսլին: Խորագիրը՝ ԻՄԲ.

Ներկայ աշխատութիւնը կը պատկանի Պենսիլվանիոյ Համալսարանին կողմէ հրատարակուող Armenian Texts and Studies նորահիմնադր Մատենաշարին, որուն թիւ 3 հատորն է: Սոյն Մատենաշարին առաջին թիւն ալ կը պատկանէր M. E. Stone-ի գրչին, և կը կրէր The Armenian Version of IV Ezra տիտղոսը: Այս Մատենաշարը կը հրատարակուի Սարգիս Թէրզեան Հիմնադրամի օժանդակութեամբ, և կը ֆարձատացնէ հայագիտական ուսումնասիրութիւններու շարքը:

գլխին: «Զէյթունի Աւետարան»-ի համեմատական տախտակները կորսուած են, կը մնան միայն Եւսեբիոսի նամակը, երկու էջի վրայ, և ընծայականը, որ ինչպէս կ'ստանադին Ա. Ի ստացած միւս ձեռագիրներուն մէջ, գրուած է կապոյտ տառերով ռսկի յատակի վրայ, զորդարուն խորանի մը ներքեւ Աւետարանիչներու պատկերները նկարուած են նուրբ արուեստով և ներդաշնակ գոյներով: Մատթեոս կը մտածէ, Մարկոս և Ղուկաս կը գրեն, իսկ Յովհաննէս կը մտածէ Մատթեոսի պէս, բայց ծնօտի կռթնցուցած ձեռքով բռնած է մազաղաթի երկար թերթ մը: Թռչուններ, բուսական և երկրաչափական մոթիֆներ կը զորդարեն կիսախորանները: Մարկոսի կիսախորանին մէջ կը տեսնուին նաև երեք կիսանդրիներ, ռսկի յատակով շրջանակներու մէջ, մէջտեղը Յիսուս, քովերը Ս. Կոյս Մարիամ և Յովհաննէս Փովբիչ, իրենց ձեռքերը երկարած աղաչողի կամ ողոթողի ձևով: Այս պատկերները կը ներկայացնեն խնդրուածքի (deesis) խմբակարգը, որ Բիւզանդական արուեստէն տնցած է Հայ արուեստին: Հայ գրչութեան մէջ զայն առաջին անգամ կը տեսնենք ԺԱ. դարուն, «Տրապիզոն» կոչուած Աւետարանին մէջ (Վնեստիկ, թիւ 1400/103), սմբողջ էջի վրայ նկարուած: Յիսուս հաս առնօրուս պատանի մըն է, փոխանակ չափահաս մարդու մը:

Թորոս Թօսլին իր միւս գործերուն մէջ քանիցս տնօրինականներ նկարած է, երբեմն սմբողջ էջի մը վրայ, երբեմն բնագրի մէջ: Զէյթունի Աւետարանը այսպիսի նկարներ չունի, բայց աւելի քանի մը փոքր պատկերներ, որոնք արժանի են մասնաւոր ուշադրութեան: Յովհաննէս Աւետարանի վերջերս (391), լուսանցքի վրայ նկարուած է Յիսուս, խուռ որ խաչը սւսին, ինչպէս յաճախ կը տեսնենք այս դարու ուրիշ ձեռագիրներու մէջ, Աւելի հետաքրքրական է ուրիշ լուսանցքի մանրանկար մը, որ կը ներկայացնէ խաչադարձ փոքր տաճար մը և մէջը Պետրոս առաքեալը: ձեռք բռնած բանալի մը: Պատկերը նկարուած է Մատթեոսի այն ընթերցուածին սկիզբը, ուր

Յիսուս կը հարցնէ Իր աշակերտներուն, թէ ի՞նչ է ժողովուրդին և իրենց կարծիքը իր խնդրութեան մասին: Եւ Պետրոսի ուղղած պատասխանը, ապա վերջինիս իր Աստուծոյ Որդի ըլլալը խոստովանելէն ետք. «Դու ես վէճ և ի վերայ այդք վիճի շինեցիք զկեկեցիք իմ...» (Մատթ. Ժե. 18): Այս լուսանցքի վրայ տաճար մը, զոյգ առարկաներ և լին. Այսպէս, հաստուածով մը սմբողջ տեսարան մը թելադրելու սովորութիւնը յատուկ է Թորոս Թօսլինի: Յիշեալ Աւետարանը նախապէս կը գտնուէր Պոլսոյ Պատրիարքարանի մէջ:

Թորոս Թօսլինէ առաջ, Կոստանդին Ա. Ի համար աշխատած էին Կիրակոս և Յովհաննէս Գրիչները, ԺԳ. դարու կէսերուն, բայց 1256էն սկսեալ Թորոս Թօսլին կ'արժանանայ Կաթողիկոսին և արքունիքին հովանաւորութեան: Թօսլին 1260ին Կաթողիկոսին համար կը ծաղկէ երուսաղէմի թիւ 251 Աւետարանը, որ իր գրչութեան և նկարչութեան արուեստին լուսադոյն նմոյսներէն մին է: Գրքուած ընտիր մազաղաթի վրայ, չառ ձեռք կրպով զարդարուած են խորանները, սկզբնազարդերը, Աւետարանիչները և տնօրինական նկարները:

Ան 1262ին, Կաթողիկոսին եղբորորդւոյն՝ Թորոս քահանային համար ուրիշ Աւետարան մը կը ծաղկէ, ձեռք կրպով զարդարուած խորաններով, և բազմաթիւ տնօրինականներով: Այս Աւետարանը կը գտնուի Պալմիթօրի (Միացեալ Նահանգներ) Ռալթօրդ Արուեստի Թանգարանին մէջ, թիւ 539: Նախապէս կը գտնուէր Սկրատսիոյ Ս. Նշան վանքին մէջ:

Ասիական տեմէն հարուստն է իր մանրանկարներով: Զեռագիրը կը բացուի Եւսեբիոսի և Կարպիանոսի դիմանկարներով: Նոյնքան ձեռք և զեղեցիկ զարդանկարուած են համաբարբառներուն խորանները, որոնցմէ քանի մը հատին զըլխադարձներուն մէջ պատկերացուած են մարգարէները: Թօսլինի ստեղծագործ հնարամտութիւնները աւելի ցայտուն են նիւթերու յորինակներուն մէջ, Կիլիկիան մանրանկարչութեան մէջ, Թօսլին

առաջինը եղած է որ ներթի մանրանկարները ներմուծած է քնագրին մէջ, մանրամասն պատկերացնելով ոչ ժրայն Աւետարանական շարքը, զետեղուած 15 էջեր գրաւող մանրանկարներու մէջ, այլեւ աւանդին առանկներ, նոյնիսկ առանկներու դրուագներ, որոնք պատկերացուած են թէ՛ լուսանցքներու վրայ, թէ՛ բնագրի աւարներ մոտերուն մէջ, և անոնց ընդհանուր քանակը կը հասնի 67 ի:

Այս ձեռագրին նկարները զետեղուած ախրելով, Գրոթ. Ս. Տէր Ներսէսեան կը հասնի այն եզրակացութեան, թէ նկարազարդումին մասնակցած են Թորոս Ռոստիքի անմիջական աշակերտները:

Զեռագիրը առաջին առթիւ գիտողին վրայ մեծ ազդեցութիւն պիտի ձգէ իր մեղմ, հարուստ ձայնային անցումներով, ուր առաւել կը հնչեն կտրմիրն ու կապալալը: Ռոստիքի սքաւորութեան է գիծի և գոյնի լուծումին միջոցները, սակայն առաջինը ենթարկուած է երբեք չէին: Թեթեւ ստուերներու օգնութեամբ ան հասած է փառալի բնութեամբին: Տիպարները ներկայացուած են առանձին շարժումներով, ընդհանրին հասնող կենդանութեամբ: Այս առնչութեամբ Ս. Տէր Ներսէսեան կ'աւելցնէ. «... Մենք հոս գործ ունինք իտէալականացուած բնականութեան մը հետ, ուր շեշտուած են ունիի նուրբ զգացումները, քան թէ կրթող զգացումները» (*):

Նոյն տարին, 1682, Թորոս Ռոստիքի կը ծաղկէ գահաժառանգ Լեոն Գ. ի և իր տիկնոջ՝ Կեռնիի համար Աւետարան մը, որ կը գտնուի Երուսաղէմի վանքին մէջ, թիւ 2660: Այս Աւետարանին մէջ կեդրոնական տեղը կը գրուէ Թանկագին մանրանկար մը, որ պատմական տեսակէտէն մեծ արժէք կը ներկայացնէ: Անիկա գահաժառանգ Լեոն Գ. ի և Կեռնի թագուհիին ամուսնութեան նկարն է: Պատկերապարար Լեոնին գէմքը մասամբ մը աւարուած է: Մանրանկարը արժէք ունի ոչ միայն գեղարուեստական ու պատմական

տեսանկէտով, այլև ազգագրական: Յայտնուէր գաղափար մըն ալ կու տայ արքայական զգեստի մասին, որ Բիւզանդականին իր նմանութեամբ շատ ուշագրաւ է:

1265 թ., Ռոստիքի կը ծաղկէ ուրիշ Աւետարան մը, այս անգամ ճշմարտագուհի Կեռնիի համար: Այս ձեռագիրը նորէն տնօրինականներով զարդարուած է: Ասոր ալ նրբանկարները՝ խորանները, խաչն լուծիւնը, խաչէն իջեցումը, յարութիւնը, այլակերպութիւնը և այլն, առանձին գրաւումներն մը կու տան ձեռագրին հանգամ մը ևս ի յայտ կը բերեն Ռոստիքի վրձինին հմտութիւնն ու վարպետութիւնը: Ասոր գեղարուեստական գործերը մէկը միւսէն քրաւիչ ու հետաքրքրական են: Այս Աւետարանը կը գտնուի Երուսաղէմ, թիւ 1956:

Հետեւեալ տարին, 1266, Ռոստիքի կը ծաղկէ Մաշտոց մը, Վարդան Եպիսկոպոս Նեապոլիսի համար, նկարելով ինչ և նոր կտակարաններէն առարներէն, ինչպէս Յովնան մարգարէն պատկերող երկու նկարներ (Յովնան կէտ ձուկին բերանը, Յովնան Նինուէ քաղաքի բլուրին վրայ նստած՝ դժմնիի շուքին, խաչուն նայողութեամբ կը սպասէ հրկիզումը քաղաքին): Վարդան Մաշտոցի անցքը Մովսէսի առաջնորդութեամբ, որ շատ հազուագիւտ նկար մըն է: Զեռագիրը կը գտնուի Երուսաղէմ, թիւ 2027:

Եւ վերջապէս, 1268 թ., նորէն Աւետարան մը կը ծաղկէ Լեոն Գ. ի որդւոյն՝ Հեթում իշխանին համար: Այս Աւետարանը ճանչցուած է իբր Վալաթիայի Աւետարան, որ Երուսաղէմի Զեռագրաց Մատենադարանի թիւ 3627 թիւը կը կրէր: Ամեն Տ. Նիշիչ Գաղարարքը նուիրեց Տ. Տ. Վաղգէն կաթողիկոսին, և ան ալ իր կարգին նուիրեց զայն Երեւանի Մաշտոցեան Մատենադարանին, այժմ՝ թիւ 10675:

Կրնանք ըսել թէ այս ձեռագիրը, իր քաղմութիւն տնօրինականներով, Թորոս Ռոստիքի ամենաշնորհալի ամենաբարձր գործն է: Ասոր մանրանկարական արուեստի գեղեցկութիւնները կը գրաւեն մեզ իրենց արարչայայտիչ և խօսքուն դժգոհողով և զգրնապարզեցումով: Նմանապէս առանձին

(*) S. Der Nersessian, «Armenian Manuscripts in the Walters Art Gallery», Baltimore, Maryland, 1973, p. 16.

ուշագործութեան արժանի է վերջին դասառարանի նկարը՝ որ իր ամբողջութեան մէջ ցայտուն գաղափար մը կոչւոյ՝ պայմանաւորաբար ինքի թորոտ Ռուսիոյ հարուստ երեսակայութեան մարմին: Հաագոյն վրձինի արտագործութեան ժրն է այս մէկն ալ, ուր բազմաթիւ խմբական պատկերները, արպարոններու խօսուան արտայայտութիւններն ու շարժումները կը բարձրացնեն նկարին գեղարուեստական արժէքը:

Ռուսիոյ մանրանկարչութեան ոճէն հետեւնելով, երկու ուրիշ ձեռագործներ կը վերագրուին իրեն, ինչպէս կը հաստատէ Փրոֆ. Ս. Տէր Ներսէսեան: Ասոնք են՝ Երեանի Մատենադարանին թիւ 5458 Աւետարանը, ծաղկուած 1266 թիւ Հռոմ-կլայի մէջ Հեթում Ա. ի համար, և Ուսաշինկի թիւ 32-18ը. որ գրուած է ծաղկուած է Հեթում Ա. ի եղբոր՝ Վասակ իշխանի համար:

Իսկ Երեանի Մատենադարանին մէջ գտնուող թիւ 8321 Աւետարանը, որուն մէջ կը գտնուի երիտասարդ Հեոն իշխանի գրծանկարը, կարելի է համարել թ. Ռուսիոյ ամենականուի ծաղկած Աւետարանը, 1254 թուականին: Ուրեմն, այսպէս, ութ ծաղկուած Աւետարաններ հասած կ'ըլլան մեզի մեծառնակ արուեստագէտի թողուն վրձինէն(?) :

Կը տեղեկանանք նաեւ Թորոտ Ռուսիոյ ծաղկած 1262 թ. Աւետարանի յիշատակարանէն (որուն մասին խօսեցանք վերը), թէ կոստանդին Ա. Կաթողիկոսի ժամանակ գրուած են շատ տալիս ձեռագործներ, ժան մեզի յայտնի եղածները: Այդ շրջանին գրուած է Հին Կապարան մը ևս, որ մինչև հիմա յայտնի չէ եղած բանաւորութեան:

ՎԱԶԷ Ծ. ՎՐԴ. ԻՆԿԱՏԻՈՍԵԱՆ

Մարտի



(?) Նոյն, էջ 161

“ՅԻՍՈՒՄԻ ԵՂԱՅՐԱԵՐԸ”

Աւետարանի հասարակ ընթերցող մը յաճախ թերփախցողութիւններ կ'ունենայ Աւետարանական կարգ մը ճշմարտութիւններ և արտայայտութիւններ ըմբռնելու մէջ: Անոնցմէ մին է Յիսուսի եղբայրներ ունենալու պարագայը:

Հայց. Եկեղեցւոյ Հոգևոր Հայրերու մեկնադրանքութիւններէն օգտուելով պիտի ջանանք կարգ մը լուսաբանութիւններ տալ՝ միանգամ ընդմիշտ փարատելու համար զիսկ հասկացողութիւններն ու թեւադրանքներն ինչը շատերու, որոնք կը շարունակեն պնդել իրենց գաղափարներուն և ըմբռնումներուն վրայ:

Նախ կ'ուզենք յստակացնել այն իմաստը ըմբռնումը թէ Տեառնեղբայրներ Յիսուսի ընտրած տասներկու առաքեալներու խումբին մէջ կը կազմեն:

Մատթ. ԺԳ. 55 թէ ճիշտագոյն եղբայրները կոչուած չորս եղբայրներ՝ Յակոբոս, Յովէս, Սիմոն և Յուդա կը յիշատակուին: Իսկ առաքեալներուն մէջ չորս չորսի նշանակուած կը գտնենք Յակոբոս, Սիմոն և Յուդա պնդողները:

Արեւմտեան Եկեղեցին կ'ուզէ նոյնացնել այդ երեք համանունները, պայտօպանելով որ անոնք նոյնիսկ Տեառնեղբայրներն են, տասներկու առաքեալներուն մէջ առնուած:

Մեր Եկեղեցին ասիկա անհաւանակած կը գտնէ, Աւետարանական փառաբերութիւնով —

1. — Երկուսուսուն առաքեալներու ընտրութենէն ետք Տեառնեղբայրներ Սուրբ Կոյսի հետ կու գան Յիսուսը փնտալու (Մրկ. Թ. 31), ինչ որ ցոյց կու տայ թէ պարբեր է ինչպէս շրջադառնակներէն:

2. — Տասներկու առաքեալներու ընտրութենէն տարի մը ետք, Տեառնեղբայրներ կը յորդորեն Յիսուսը որ Երուսաղէմ երթայ և ինքզինքը աշխարհի յայտնէ. ճիշդիս է եղբորքն իսկ չէին հաւատարմէ ի նա (Յովհ. Ե. 5): Յիսուսի հետ շրջադառնակներուն չի յարմարիր այսպիսի թերահաւատութիւն մը:

3. — Թիսուսի համբարձուճէն ետք, վերնատան մէջ հաւաքուած հուստառայուններու մասին Ղուկաս Աւետարանիչ մատառան առաքելները իրենց անուաններով կը յիշէ. որոնց մէջ են նաեւ Յակոբոս Ալփեան, Շմաւոն Նախանձայայդ և Յուդա Յակոբեան: Ապա կ'աւելցնէ թէ ՎՍՊ քաւածնեքեան (մատառան առաքելները) էին հանապազորդեալ միաբան յաղթաւ հանդերձ կանամբք և Մարիմաւ մարբն Յիսուսի և եղբարք ձորաւ (Կորնթ. Ա. 13-14): Որով Տեսունեղբայրները յատկապէս կը զտառուին առաքելներէն:

4. — Եթէ իրապէս երկոտասանից մէջ երեք հարազատ եղբայրներ ըլլային, Աւետարանիչները նշանակած կ'ըլլային, ինչպէս կ'ընեն Յովնանեան և Զերեդեան եղբայրներու պարագային:

Հետեւաբար Յակոբոս Զերեդեայ, Յակոբոս Ալփեայ և Յակոբոս Տեսունեղբայր երեք տարբեր Յակոբոսներ են, և այս պատճառաւ մեր Եկեղեցին ալ երեք տարբեր առնէր կը կատարէ երեք առաքելներուն համար:

«Թիսուսի եղբայրներըն մասին ակնորակութիւններ կան Մտաթ. ԺԲ. 46-50 Ի. Մտաթ. ԺԳ. 53-54 Ի, Մրկ. Գ. 31-35 Ի և Ղկա. Ը. 19-21 Ի մէջ:

Տեսունեղբայրները Ս. Կոյսին հետ կու գան Յիսուսը փնտռելու, որովհետեւ Ան երկար ժամանակէ ի վեր կը քարոզէր և հետեւաբար հանգստանալու պէտք ունէր: Երբ լուրը Յիսուսի կը հասնի, մեր Տէշը չի հաճիր ընդհատել իր քարոզը, այլ ձեռքը տարածելով և իր աշակերտներն ու հետեւորդները մտանոնչելով, զգալուն ձայնով մը կ'ըսէ. «Ով որ Աստուծոյ կամքը կը կատարէ, ան է իմ եղբայրս և քոյրս և մայրս» (Մրկ. Գ. 35): Շարաթ օր մը Բիւստոս Նազարէթի փողովարանին մէջ կը սկսի քարոզել և աւետարանական վարդապետութիւնը երկնից արքայութեան յայտնուելուն և Նոր Ուխտի սկսելուն խորհուրդները մեկնել աշխարհի խորունկ և զօրուոր կերպով, որ բոլոր լսողները սկսան զարմանալ իր ունեցած իմաստութեան և զօրութեան վրայ՝ ըսելով. «Ո՞րչ ուս է մանուկ հիւսանն և որդին Մտրեմայ, եղբայր Յակովդ»:

բայ և Յովսեփ և Յուդայի և Սիմոնի, և չիցենք քորք դարա աստ առ մեզ» (Մրկ. Զօ 3):

Արդեւք ի՞նչ կերպով կամ ի՞նչ կոսակցութեամբ Յակոբոս, Յովսէփ, Յուդա և Սիմոն կրնան Յիսուսի եղբայրները կոչուիլ:

«Եղբայր» կոչման խիստ իմաստին հետեւելով. ոմունք կ'ենթադրեն թէ այս չորսը Յիսուսի հարազատ եղբայրներն էին, իր ծնունդէն ետք ծնած Յովսէփի և Մարիամի զուակները, քանի որ Յիսուս Անդրանիկ կոչուած էր (Ղկա. Բ. 7):

Ասիկա անհուսալական է, որովհետեւ այսպիսով եղծած կ'ըլլան Աստուածածնի կոյս յետ ծննդեան և միշտ կոյս ըլլալուն պատիւը: Մեր Եկեղեցին կ'ընդունի կոյս յետ ծննդեան և միշտ Սուրբ կոյս բուստութեան իրականութիւնը:

Ուրիշներ կը խորհին թէ Յովսէփ իր առաջին ամուսնութենէն ունէր յիշեալ չորս զուակները և Մարիամ իր երկրորդ կինը ըլլալով, Յիսուս հանրութեան կողմէ միւս չորսին որպէս եղբայր կը ճանչցուէր, ինչպէս որ Յովսէփի Որդի ալ կը կոչուէր:

Երկուսի և Տեսունեղբայրներուն ազգակցութիւնը հարազատ չէր: Արեւելքի մէջ եղբայրներու և քոյրերու զուակները իրարու եղբայր և քոյր կը կոչուէին: Աւետարաններէն քողովով կրնանք հաստատել և բացատրել իրականութիւնը:

Աւետարանները Յիսուսի խաչին մօտ գտնուող կիները յիշելու տանն հետեւեալ անունները կու տան. «Մարիամ Մագդաղենացի և Մարիամ Յակովբայ և Յովսեփայ մայր, և մայր որդուցն Զերեդեայ» (Մտաթ. ԻԷ. 56): «Մարիամ Մագդաղենացի և Մարիամ Յակոբոս փոքրկան և Յովսեփայ մայր, և Սողոմէն» (Մրկ. ԺԵ. 40): Մայրն նորա և քոյր մօր նորա Մարիամ կոչուիլուայ և Մարիամ Մագդաղենացի» (Յովմ. ԺԹ. 25):

Տիրմայրէն զատ, զոր միայն Յովսեփն և Տեսունեղբայրները յիշած է, երեք կիներու անուններ կը գտնենք խաչելութեան ժամանակ: Մարիամ Մագդաղենացի ծանօթ է: Երկրորդ Մարիամ մը՝ Յակոբի և Յովսէփի մայր կոչուած, հաւանաբար

չորս Տեառնեղբայրներուն մայրը կրնայ ճանչցուիլ: Ուրիշ տեղ մը նոյն Մարիամը կոչուած է կղեովպասի կին և հետևաբար կղեովպաս Տեառնեղբայրներուն հայրը կ'ըլլայ: Ուրեմն Տեառնեղբայրները կղեովպասի և Մարիամի — ոչ թէ Տիրամօր — զաւակներն էին:

Տիրամայրն ու Մարիամ կղեովպայ քոյրեր չեն կրնար ըլլալ, որովհետեւ Տիրամայր Մարիամ Յովակիմի և Աննայի ժիտկ աղջիկն էր՝ ըստ աւանդութեան: Ընդունուած աւանդութիւնն այն է թէ Յովսէփ — Աստուածահայր — և կղեովպաս եղբայրներ էին: Որով Յիսուս և Տեառնեղբայրներ հօրեղբորդիներ կ'ըլլային և ժամանակի սովորութեամբ իրարու եղբայր կը նկատուէին և կը կոչուէին:

Յովհաննէս Աւետարանչի գրած «Եւ քոյր մօր նորա Մարիամ կղեովպայ» խօսքով Մարիամ կղեովպայ Մարիամ Տիրամօր իրրեւ հարազատ քոյր չի կրնար ըլլալ՝ ինչպէս տեսնուք, այլ իրարու ներկ'ըլլան: Իսկ ներքին ալ իրարու քոյր անուանել սովորական չէ: Միւս կողմէ, եթէ «քոյր մօր նորա» խօսքը ուղղակի Մարիամ կղեովպայի պատշաճեցնուք, խաչին մօտ Յովհաննէս երկու կիներ յիշած կ'ըլլայ Տիրամայրէն զատ: Միւս Աւետարանները երեք կիներ կը յիշեն: Յովհաննէս և իր մայրը՝ Սողոմէ խաչին մօտ կը գտնուէին: Յովհաննէս չի կրնար մոռցած ըլլալ իր մայրը:

Յովհաննէսին խօսքը ստորակէտ մը աւելցնելով կարդալու է, այսպէս. «Մայրն նորա և քոյր մօր նորա, Մարիամ կղեովպայ և Մարիամ Մազդաղենացի» (ԺԹ. 25): Տիրամօր քոյր կոչուած կինը կ'ըլլայ Սողոմէն, որ իրապէս ալ Ս. Կոյսի մօրաքնուորդին է: Մատթան Քահանայ երեք աղջիկներ ունեցաւ, Աննա՝ Տիրամայր Մարիամի մայրը, Սովիւէ՝ եղիսարէթի մայրը և Մարիամ՝ Սողոմէի մայրը: Որով Տիրամայրը, եղիսարէթը և Սողոմէն իրարու մօրաքնուորդիներ կ'ըլլան: Այս բացատրութեամբ է որ Յովհաննէս նշանակած է իր մայրը՝ Սողոմէն, իրրեւ «քոյր մօր նորա»:

Նազարէթցիներուն ըսած խօսքին մէջ չորս Տեառնեղբայրներէն զատ կը յիշուին նաեւ Տեառնաքոյրեր. «Չիցեա՞ն քոյրք զորա աստ առ մեզ» (Մրկ. 2. 3). այսինքն ըսել կ'ուզեն թէ անոր քոյրերը ատկաւին մեր քաղաքին մէջ չեն: Աւետարաններէն որեւէ տեղեկութիւն չունինք անոնց մասին: Ուրեմն Տեառնեղբայրներ քոյրեր ալ ունէին, որոնք Նազարէթի մէջ կ'ապրէին՝ ամուսնութեան պատճառաւ: Իսկ Տեառնեղբայրներ Տիրամօր հետ կաթառնառւմ կը գտնուէին:

Որով կը տեսնենք թէ Քրիստոս հարազատ եղբայրներ և քոյրեր չունէր, և Տիրամայր Մարիամ մեր Եկեղեցւոյ կողմէ կ'ընդունուի որպէս Աստուածածին և ժիշտ Սուրբ Կոյս:

Գալլիֆորնիա

ՍԻՓԱՆ ՎՐԴ. ՄԵՍԵԱՆ



ՀՈՒՐԵՐ ԷՔՈՒՄԵՆԻԲ ԱՇԽԱՐՀԷՆ

ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ

ԿԵԳՐՈՒՆԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎՐ

Այս ամառ, Օգոստոսի 16-27, Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդը կազմակերպեց իր Գեղրոնական Վարչութեան Տարեկան Ժողովը. Արեւելեան Գերմանիոյ Տրէզտըն քաղաքին մէջ: Ընդհանուր Գարտուղար Տրթ. Ֆրիլպ ֆօթըր, իր ճառին սկիզբը շնորհեց կարեւորութիւնը տեղին. «Այս երկրորդ անգամն է Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի կեանքին մէջ, որ Գեղրոնական Վարչութիւնը իր Ժողովը կը գումարէ Արեւելեան Եւրոպայի ընկերավարական պետութեան մը մէջ: Մեզի համար որ կու գանք աշխարհի զանազան մասերէն, հրճուանք է հաւաքուիլ այստեղ իրրեւ ներկայացուցիչներ Աստուծոյ Ժողովուրդին, խոստովանողներս՝ հասարակաց մեր հաւատքը ի Տէրն մեր Յիսուս Քրիստոս՝ մեր Աստուածը եւ Փրկիչը, հաւատք մը, որ կը գերանցէ եւ կը հարցաքննէ գաղափարական, քաղաքական, տնտեսական, ցեղային եւ ընկերային դիրքաւորումները:

«Յատուկ նշանակութիւն մը ունի մեր Ժողովին գումարումը Տրէզտընի մէջ: Մինչ այս քաղաքը պատմական հուշակ ունի, իրրեւ Գեղրոնական Եւրոպայի մշակութային կեդրոն մը, մեզմէ շատերուն համար, ծանօթ է ան սեւ այն օրուան պատճառով, 1945ի Փետրուարին, երբ Տրէզտըն գործնապէս գետնին հաւասար եղաւ ռմբակոծումով եւ 100,000է աւելի քաղաքացիներ հրակէզ ունչացան...»

«Երբ լուրը հասաւ Ճամայքա, մենք խօսեցանք ազգերու եւ մեր ընկերային կտրգերու հիւանդ վիճակի մասին...»:

Ընդհանուր Գարտուղարը Ժողովին ուղղութիւնը ներշնչող իր ճառով բնութագրեց ընկերային, քաղաքական եւ բարոյական այն հիւանդութիւնները, որոնք կը սպառնան մեր «անձնական, ընկերային, ազգային եւ միջազգային» կեանքին:

Ան մէջբերում մը կատարեց 1956ին գումարուած Գեղրոնական Վարչութեան Ժողովի այստարարութիւնէն.

«Աղաքս՝ վտանգի մէջ է Ֆիզիքապէս, բարոյապէս եւ հոգեպէս: Իրրեւ հետեւորդները Անոր, որ սիրեց մարդերը բոլոր եւ իր վրայ առաւ անոնց մեղքերն ու ցաւերը, մենք չենք կրնար անտարբեր ըլլալ մարդուն սպառնացող վտանգին»:

«Խոշոր նեղուց մը կը բաժնէ հարուստն ու աղքատը միջազգային մակարդակի վրայ: Եկեղեցիները չեն կրնար համակերպիլ այս կացութեան, այլ պարտին պայքարիլ իրենց ամբողջ ոյժով նեղցնելու համար այդ վիճի:

«Երբ ազգ մը կը տիրապետէ ուրիշ ազգի մը քաղաքականապէս եւ տնտեսապէս, նուաճուած եւ ընկճուած Ժողովուրդը զրկուած կը մնայ ամբողջապէս պատասխանատու ընկերային կեանք մը զարգացնելէ:

«Վարդկութիւնը կը սարսափի աթոմային զէնքերու փորձարկութեան վտանգէն: Կոչ կ'ընենք Եկեղեցիներուն որ դիմեն իրենց կառավարութիւններուն եւ Միացեալ Ազգերու Կազմակերպութեան որ բանակցութիւններ կատարուին հասնելու համար համաձայնութեան մը, որ դադրեցնէ, կասեցնէ կամ սահմանափակէ նման փորձարկութիւններ, վերջ տալու համար վտանգին:

«Աշխարհը խաղաղութեան կը ցանկայ, բայց պիտի չհասնի անոր, մինչեւ մարդիկ պատրաստ ըլլան զոհոյթիւններ կատարելու խաղաղութեան սիրոյն եւ հրաժարին գործերէ որոնք պատերազմ կը պատրաստեն»:

«Բասնհինգ տարիներ ետք, սակաւաթիւ են նշանները դարմաններու, որոնք պիտի փրկեն մարդկութիւնը իր ախտերէն: Եկեղեցիներու պատասխանատուութիւնն է զի՝

տակցութեան բերել քրիստոնեայ աշխարհը, որ իր հիմնական առաքելութիւնը նկատէ պայքար անարդարութեան, ցեղային խտրութեան, չարաշահութիւններուն եւ սպառազինութեան արշաւին դէմ, յանուն Անոր, որ ըսաւ բուժուած հիւանդին. «Հաւատադ փրկեց քեզ, զեա խաղաղութեամբ» (Ղկա. Ը. 48):

«Բուժումը կու գայ ոչ միայն ապաշխարութեան ծիսական արարքներով, ինչպէս պահնցողութիւնը, այլ պատասխանելով Աստուծոյ կոչին, որ աշխատինք ճնշուածին ազատագրութեան համար եւ մտահոգութիւնը աղքատին եւ զրկուածին վիճակով»:

Եկեղեցիներու ներկայացուցիչներուն ուղղուած սրտառուէ կոչը մղեց ժողովականները ներկայացուած հարցերը քննարկելու պատասխանատուութեան ոգիով մը, յստակելու նպատակով ամէն մարզերը, ուր Եկեղեցին եւ Եկեղեցիները, առանձին կամ միասնական ճիգերով, պարտին բերել Աւետարանին պատասխանը այսօրուան մեծ հարցերուն:

Մեծ հարցերուն բանաձեւումը կատարեց Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի Ընդհանուր Ժողովը պատրաստող յատուկ յանձնախումբը: Ընդհանուր Ժողովը պիտի գումարուի 1983ի ամառը, Վանքովըր քաղաքին մէջ, Գանատա: Տրէզորին ժողովը զբաղեցաւ զլիաւորաբար նախապատրաստական աշխատանքներով: Գործնական կարգադրութիւններէն աւելի, ժողովականները քննարկեցին պարունակութիւնը առաջարկուած հարցերուն եւ բանաձեւեցին չորս «գլխաւոր մտահոգութիւններ» եւ «տասը գործի առաջադրանքներ»:

Ընդհանուր Ժողովին քնարանը պիտի ըլլայ. «Քրիստոս՝ տիեզերքի կեանքը»: Կեդրոնական գաղափարը կեանքի գաղափարն է, այսօրուան աշխարհի պայմաններուն մէջ:

Անդրանիկ մտահոգութիւնը՝ կեանքի որակի հարցն է: «Աստուած է կեանքին աղբւրը: Կեանքը մեզի շնորհուած գանձ մըն է, որուն համար պարտինք մեր երախտագիտութիւնը յայտնել Աստուծոյ, ապրելով մեր կեանքը Իր կամքին համաձայն»:

Երկրորդ մտահոգութիւնը՝ սպառնալիքներն են կեանքին: «Մեր կոչն է որ պաշտպանենք աստուածապարգեւ կեանքը արարչութեան ամբողջութեան մէջ, մահուան տանող ոյժերու սպառնալիքներուն դիմաց, ինչպէս են աթոմային ոչնչացում, կեանքի կենսաբանական փորձարկութիւն, աղքատութիւն եւ չարաշահում: Մեր պայքարի ընթացքին նման ոյժերու դէմ, մեր ներսը կամ աշխարհի վրայ, կը հռչակենք կեանքի յաղթանակը մահուան վրայ»:

Երրորդ մտահոգութիւնն է պայքար մղել աւելի լեցուն եւ ամբողջական կեանքի մը համար: «Քրիստոսի մէջ ապրուած կեանքը կը վերափոխէ կեանքի իմաստը, ընելով զայն տարրեր պարզ գոյատեւումէ: Ան կու տայ բոլորին նոր իմաստաւորում, արդարամտութիւն, բուժում եւ լիութիւն»:

Չորրորդ մտահոգութիւնը համամարդկայնութիւնն է կեանքին: «Մեր բաժանումներուն մէջ կը ջանանք միատեղել Եկեղեցիները, ազգերը, մշակոյթներն ու ցեղերը, կին եւ մարդ, երիտասարդ եւ ծեր, անկարող եւ առողջ: Ինչպէ՞ս ընել որ Եկեղեցիները տան իրենց անդամներուն եւ զրացիներուն օրինակը եւ նախաճաշակը մարդկային ամբողջական ընտանիքի մը, որուն անդամ ըլլայ ամէն մարդ»:

Չորս մտահոգութիւններէն ըզխած առաջադրանքները յանձնարարութիւններ են Կեդրոնական Վարչութեան կողմէ Եկեղեցիներուն տրուելիք: Ասոնք կ'ամփոփեն նաեւ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի ստեղծած զանազան մարմիններուն կատարած ուսումնասիրութիւնները, ժողովները եւ գործնական աշխատանքները վերջին հինգ տարիներուն:

1. Բարի լուր աղօթներուն: Ինչ կ'ընեն Եկեղեցիները իրական կերպով արտայայտելու համար իրենց նեցուկ աղքատին, իրենց յարաբերութիւններուն մէջ եւ համայնքային կեանքէն ներս: Իրեւ մասնակցութիւն անոր զարգացումին եւ իրելու առաքելութեան կերպ (Մէլպուռնի Ժողով, 1979):

2. Մկրտչիւմ, Պատագ եւ Ձեռնագրութիւն: Յայտարարութիւնները, որոնք կը յայտնեն աստուածաբանական համաձայնութիւններ, պիտի ներկայացուին Եկեղեցիներուն, որպէսզի ընդունուին իբրեւ վարդապետական հաստատում, իւսուցողական եւ ծիսական գործածութեան համար: (Հինգ տարիներէ ի վեր ժողովներ գումարեւելացան աստուածաբաններու եւ Եկեղեցիի ներկայացուցիչներու, համաձայնութիւն գոյացնելու համար երեք զխաւոր խորհուրդներու շուրջ, որպէսզի իրականացուի մէկ մկրտութեան սկզբունքը, կարելի ըլլայ հաղորդութիւնը բաշխել բոլորին, առանց դաւանական խտրութեան, եւ ձեռնադրուած հոգեւորականը փոխադարձաբար ճանչցուի Եկեղեցիներուն միջեւ: Այս ձեռնարկը, որ կը ղեկավարուի «Հաւատք եւ Կարգ» Յանձնախումբին կողմէ, յառաջացած է եւ հասունցած, իբրեւ աստուածաբանական բացատրութիւն եւ հասարակաց հասկացողութիւն: Կը մնայ անոնց դաւանական որդեգրումը Եկեղեցիներու պաշտօնական իշխանութիւններուն կողմէ:)

3. Դաւանութիւն միութեան մէջ: Նոր ուղիներ կը փնտռուին բացայայտելու համար քրիստոնէական միութիւնը, երբ Եկեղեցին կը կատարէ առաքելական իր կոչումը: Եկեղեցիներուն առջեւ բացուած են նոր առիթներ միասնաբար դաւանելու իրենց հաւատքը, ինչ որ արդիւնքն է միութեան եւ կը տանի աւելի խոր միութեան: Անոնք կանչուած են սորվելու ուրիշներէն եւ բաժնելու իրենց գիտցածը այլադաւան դրացիին հետ: («Առաքելութիւն եւ Աւետարանութիւն» բաժինը կը ջանայ խօսակցութեան նստելու այլադաւան կրօններու եւ զաղափարաբանութիւններու ներկայացուցիչներուն հետ, գլխաւոր նպատակ ունենալով խաղաղ գոյակցութեան եւ ներդաշնակ գործակցութեան կացութիւններ ստեղծել այն երկիրներուն մէջ մանաւանդ, ուր տարբեր կրօններու պատկանող համայնքներ միասին կ'ապրին:)

4. Համաեւսարհային (էկիւմէնիկ) բաժանում հաւստութիւններու: Պէտք է խորապակել իշխողի եւ հայցողի միջեւ գոյութիւն ունեցող յարաբերութեան անիւր եւ ստեղծել յարաբերութեան նոր ձեւեր Եկեղեցիներուն միջեւ, հիմնուած հարստութիւններու արդար յանձանձումի սկզբունքին վրայ: Նոր հիմք պէտք է ստեղծել յարաբերութիւններու, առաքելութեան, սպասարկութեան եւ Եկեղեցիներու փոխադարձ օգնութեան մէջ: (Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդը ունի զանազան կազմակերպութիւններ, որոնք նիւթապէս կ'օգնեն տկար Եկեղեցիներուն եւ անոնց կրթական, ուսումնական եւ բարեփարական ծրագիրներուն: Միտում մը կայ վերջ տալու կացութիւններուն, ուր տկար Եկեղեցիներու աշխատանքը պայմանաւորուած է զօրաւոր Եկեղեցիներու բարի կամեցողութենէն, որպէսզի օգնութիւն ստացող Եկեղեցիները ըլլան ինքնաբաւ:)

5. Պայմար խաղաղութեան համար, արժանիք դառնալ մէջ: Եկեղեցիները կոչուած ունին տրեւելու եւ ցուցաբերելու իրենց պարտաւորութիւնը աշխատելու խաղաղութեան եւ զինաթափումի համար: 1979ի ժողովը, որ տեղի ունեցաւ Մասսչիւսէթսի Դիտական Ինսթիթիւթիին (Massachusetts Institute of Technology) մէջ, իր առած որոշումին մէջ՝ «Դիտութիւնը ի սպաս խաղաղութեան», բացայայտած է խաղաղութեան կոչը, խնդրելով քրիստոնեաներէն եւ Եկեղեցիներէն որ յառաջացնեն գիտակցութիւնը եւ աշխատին ստեղծել ընկերային հսկողութեան միջոցներ գիտութեան եւ ճարտարաւեստին (technique) վրայ: (Զինաթափումի համար եւ սպառազինման դէմ պայքարի ծրագիրն է այս, որ մշակումի մէջ է միւս բաժինն մէջ: Նաեւ՝ Ուսումնասիրութիւն «Եկեղեցի եւ Ընկերութիւն» բաժինն մէջ՝ աթոմական ոյժի եւ զգիտութիւնը ի սպաս խաղաղութեան» մասին:)

6. Հետապնդում արդար եւ բաղձալի ընկերութեան մը, հիմնուած մասնակցութեան (participation) վրայ: Կեանքի լիութեան հասկացողութիւնը զոր ունին Եկեղեցիները, ինչպիսի՞ գործնական քայլերու պէտք է առաջնորդէ զանոնք, երբ կը հետա-

պնդելն լազուժի եւ տնտեսական քաշխուժի նոր տիպարներ կամ քաղաքական քարոյականի. եւ տնտեսական զարգացումի ցանկալի տիպարներ: Նման հարցադրումներու պատասխանելու համար պէտք է նկատի ունենալ մտահոգութեան առարկաները, որոնք ի յայտ եկան Մասսաչիւսէթսի համազումարին. չարաշահութեան մասնագիտակաւացումներ, դործնական մասնագիտացումներ եւ գիտութեան ընկերային պատասխանատուութիւնը:

